

«24» մարտ 2021թ.

No 933 - Լ

«ՖԱԳՈՍՈՒՐՖ ՆԴ» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «ՖԱԳՈՍՈՒՐՖ ՆԴ» ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյան՝ հրամանը տեղադրել առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

ՀՀ առողջապահության նախարարի
2021թ. մարտի 24-ի թիվ 933 – Լ հրամանի

ՀՐԱՀԱՆԳ

«ՖԱԳՈՍՈՒՐՖ ՆԴ» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ՖԱԳՈՍՈՒՐՖ ՆԴ» ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց) իրենից ներկայացնում է սպիտակից մինչև բաց-դեղին գույնի, բուրանյութի յուրահատուկ հոտով թափանցիկ հեղուկ: Որպես ազդող նյութեր՝ պարունակում է. դիդեցիլմեթիլամոնիումի քլորիդ (չորրորդային ամոնիումային միացություն՝ ՉԱՄ) 3,5%, N-(3-ամինոպրոպիլ)-N-դիդեցիլպրորան-1,3-դիամին (տրիամին) - 5,5%, ինչպես նաև օժանդակ բաղադրիչներ: ՅՃԹԱ, ոչ իոնոգեն մակերեսային ակտիվ նյութեր (ՄԱՆ), բուրանյութ և այլն:

2. Միջոցի ջրաձնային իոնների խտությունը (pH)՝ 8,8 – 9,4 է: Միջոցի պիտանելիության ժամկետը 3 տարի է՝ արտադրողի չբացված փաթեթավորմամբ: Միջոցի աշխատանքային լուծույթների պիտանելիության ժամկետը 14 օր է: Միջոցը թողարկվում է 20 մլ սաշեններով, 1 և տարողությամբ սրվակներով, 5 և տարողությամբ կանխատրներով:

3. Միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ տուբերկուլոզի միկոբակտերիան՝ թեստավորված M. Terrae-ի վրա), ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, վիրուսների (ներառյալ ադենովիրուսները, գրիպի վիրուսները և սուր շնչառական վիրուսային վարակների այլ հարուցիչները, էնտերովիրուսները, ռոտավիրուսները, պոլիոմիելիտի վիրուսը, բոլոր տեսակի հեպատիտների վիրուսների, ներառյալ Ա, Բ և Ց հեպատիտների, հերպեսի, ատիպիկ թոքաբորբի, թոչնի գրիպի, խոզի գրիպի, ՄԻԱՎ-ի վիրուսները), Կանդիդա, Տրիխոֆիտոն ցեղի սնկերի (դերմատոֆիտների), բորբոսասնկերի նկատմամբ, ինչպես նաև օժտված է ակտիվությամբ՝ հատուկ

վտանգավոր վարակների (տուլարեմիայի, խոլերայի, ժանտախտի, լեգիոնելոզի) նկատմամբ:

4. Միջոցի լուծույթներն օժտված են լավ վացող և դեզոդորացնող հատկություններով: Միջոցը լավ համատեղվում է տարբեր մակերեսների հետ, կոռոզիայի չեն ենթարկում մետաղյա արտադրատեսակները, չեն փչացնում և չեն գունաթափում մշակվող օբյեկտները, օժտված չեն ամրակցող (ֆիքսող) ազդեցությամբ օրգանական աղտոտվածությունների նկատմամբ: Միջոցը չի կարելի համակցել օճառների և անիոնային մակերեսային ակտիվ նյութերի հետ: Աշխատանքային լուծույթները դյուրավառ չեն, հրդեհանվտանգ և պայթյունանվտանգ են: Միջոցի աշխատանքային լուծույթով մակերեսի մշակումից հետո երկարաձգված հակամանրէային արդյունքը պահպանվում է 3 ժամ:

5. Ըստ սուր թունավորության չափանիշների, ստամոքսի մեջ ներմուծելիս միջոցը պատկանում է չափավոր-վտանգավոր նյութերի 3-րդ դասին, մաշկի վրա լցվելիս՝ քիչ վտանգավոր նյութերի 4-րդ դասին (ԳՕՍՍ 12.1.007-76), արտաընդերային ներմուծման ժամանակ՝ քիչ թունավոր նյութերի 4-րդ դասին՝ ըստ Կ. Սիդորովի դասակարգման: Միջոցի գոլորշիները հագեցած խտություններով, ըստ ցնդելիության աստիճանի, քիչ վտանգավոր են (վտանգավորության 4-րդ դաս): Միջոցը բնորոշվում է մաշկի և աչքերի լորձաթաղանթի վրա տեղային-գրգռիչ ազդեցությամբ մեկանգամյա ազդեցության ժամանակ և արտահայտված՝ չվնասված մաշկի վրա կրկնակի ազդեցությունների ժամանակ: Միջոցն օժտված չէ գերզգայունացնող և մաշկային-ռեզորբտիվ ազդեցությամբ:

6. Միջոցի աշխատանքային լուծույթները մաշկի վրա չեն թողնում տեղային-գրգռիչ ազդեցություն, օժտված են թույլ գրգռող ազդեցությամբ աչքերի լորձաթաղանթի վրա, կարող են գրգռող ազդեցություն ունենալ վերին շնչուղիների վրա դրանց՝ ոռոգման եղանակով կիրառման ժամանակ՝ միջոցի ծախսի նորման գերազանցելու դեպքում:

7. Չորրորդային ամոնիումային միացությունների (ՉԱՄ) սահմանային թույլատրելի խտությունը (ՍԹԽ) աշխատանքային գոտու օդում 1մգ/մ³ է (աէրոզոլ): Տրիամինների ՍԹԽ-ն աշխատանքային գոտու օդում՝ 1մգ/մ³ (աէրոզոլ):

8. Միջոցը կիրառվում է.

- 1) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն) և առողջապահական այլ կազմակերպություններում (ներառյալ կլինիկական, ախտորոշիչ, մանրէաբանական և այլ լաբորատորիաները, նեոնատոլոգիական բաժանմունքները, ծննդատները, նորածնային սենյակները, մանկական բաժանմունքները), արյան փոխներարկման և շտապ բուժօգնության կայաններում, մանկական և քրեակատարողական հաստատություններում, վարակի օջախներում սենքերում մակերեսների, կոշտ և փափուկ կահույքի, կահավորման պարագաների, հատակի գորգե և այլ ծածկույթների, պաստառապատման գործվածքների, կենցաղային իրերի, սարքերի և սարքավորումների, սանիտարա-տեխնիկական սարքավորումների մակերեսների (այդ թվում հախճապակե, չուգունե և ակրիլային լոգարանների, ցնցուղախցերի և այլն), սպիտակեղենի, ճաշի, լաբորատոր և դեղատնային սպասքի (այդ թվում մեկանգամյա), սպասք լվանալու պարագաների, ռետինե և պոլիպրոպիլենային գորգերի, մաքրման պարագաների և նյութերի, խաղալիքների, մարզագույքի, պացիենտի խնամքի պարագաների, անձնական հիգիենայի պարագաների, այլ օժանդակ պարագաների ախտահանման, մաքրման, լվացման և դեզոդորացման համար, արտակարգ իրավիճակներում ընթացիկ, եզրափակիչ և կանխարգելիչ ախտահանման համար,
- 2) բժշկական սարքավորումների (այդ թվում կուլեզների, նարկոզա-շնչառական սարքերի, անէսթեզիոլոգիական սարքավորումների, շնչառական կոնտուրների, պարկերի, ախտորոշիչ սարքավորումների տվիչների, ներառյալ ուլտրաձայնային հետազոտության՝ ՈւՁՀ, վերակենդանացման և բարուրասեղանների տվիչները և այլն) ախտահանման համար,
- 3) ալգինատային, սիլիկոնային նյութերից, պոլիէթերային խեժից ատամնաբուժական արտատպվածքների, մետաղյա, կերամիկայից, պլաստմասե և այլ նյութերից ատամնապրոթեզային կիսահումքերի, ատամնաբուժական սարքերի արտածող համակարգերի, թքարտածծիչների և թքամանների ախտահանման համար,

- 4) բժշկական նշանակության արտադրատեսակների (ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական գործիքները, այդ թվում պտտվող, կոշտ և ճկուն էնդոսոպները, դրանց կից գործիքները) ձեռքային եղանակով ախտահանման համար,
- 5) բժշկական նշանակության արտադրատեսակների (ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական գործիքները, այդ թվում պտտվող, էնդոսոպներին կից գործիքները) նախամանրէազերծման հետ համակցված ախտահանման համար՝ ձեռքային և մեքենայացված (ցանկացած տեսակի ուլտրաձայնային սարքերի մեջ) եղանակներով,
- 6) ճկուն և կոշտ էնդոսկոպների նախամանրէազերծման հետ համակցված ախտահանման համար՝ ձեռքային և մեքենայացված եղանակներով,
- 7) բժշկական նշանակության արտադրատեսակների (ներառյալ էնդոսոպներին կից գործիքները, վիրաբուժական և ատամնաբուժական գործիքները, այդ թվում պտտվող, ինչպես նաև ատամնաբուժական նյութերը) ախտահանման հետ չհամակցված նախամանրէազերծման համար՝ ձեռքային և մեքենայացված (ցանկացած տեսակի ուլտրաձայնային սարքերի մեջ) եղանակներով,
- 8) կոշտ և ճկուն էնդոսկոպների ախտահանման հետ չհամակցված նախամանրէազերծման (կամ եզրափակիչ մաքրման) համար՝ ձեռքային և մեքենայացված եղանակներով,
- 9) էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախնական, նախամանրէազերծման (բարձր մակարդակի ախտահանում՝ ԲՄԱ-ից առաջ եզրափակիչ մաքրման) համար,
- 10) թափոնների՝ մեկանգամյա օգտագործման բժշկական նշանակության արտադրատեսակների, վիրակապական նյութերի, մեկանգամյա օգտագործման սպիտակեղենի և այլնի ախտահանման համար՝ օգտահանումից առաջ, ինչպես նաև սննդային և այլ թափոնների (հեղուկ թափոններ, ներառյալ էնդոսկոպիական լվացման ջրերը), ինչպես նաև հիվանդի կենսաբանական արտադրությունների (խորխ, մեզ, արտաթորանք, փսխման զանգված և այլն), կենսաբանական նյութի մաքրումից հետո մակերեսների, հիվանդի արտադրությունների անոթների ախտահանման համար,

11) արյան մակարդուկների, դոնորական արյան և պիտանելիության ժամկետն սպառված արյան պատրաստուկների, տզրուկաբուժությունից (հիրուդոթերապիայից) հետո բժշկական տզրուկների ախտահանման համար,

12) սանիտարական տրանսպորտի և սննդամթերքի տեղափոխման տրանսպորտի ախտահանման համար,

13) առողջապահական կազմակերպություններում, մանկական նախադպրոցական, դպրոցական և այլ հանրակրթական և առողջարարական հաստատություններում, սպասարկման ոլորտի օբյեկտներում (հյուրանոց, հանրակացարան, սանթոդարան, բուժսթափարան, հանգստյան տուն, պանսիոնատ, առողջարան, ինտերնատ, տուրբազա, զորանոց, լողավազան, բաղնիք, շոգեբաղնիք, մարզահամալիր, լվացքատուն, քիմմաքրում, արտադրական-պահեստային համալիրի հաստատություններ, սպասարկման ոլորտի կազմակերպություններ), քրեակատարողական և այլ հիմնարկներում հիմնական մաքրում իրականացնելու համար,

14) օդի, օդորակման և օդափոխության համակարգի ախտահանման համար (կենցաղային օդորակիչներ, սալիտ-համակարգեր, մուլտիզոնային սալիտ-համակարգեր, տանիքի օդորակիչներ և այլն)` տարբեր օբյեկտների վրա ցողացրման եղանակով,

15) սենքերի, սարքավորումների, հանրային սննդի, մթերային առևտրի, գյուղատնտեսական կազմակերպություններում, սպառողական և արդյունաբերական շուկաներում, գործիքների և սպասքի, մարզա-առողջարարական հաստատություններում, սպասարկման ոլորտի օբյեկտներում (սպասարկման օբյեկտներ, հյուրանոց, հանրակացարան, սանթոդարան, բուժսթափարան, հանգստյան տուն, պանսիոնատ, առողջարան, ինտերնատ, տուրբազա, զորանոց, լողավազան, բաղնիք, շոգեբաղնիք, մարզահամալիր, լվացքատուն, քիմմաքրում, արտադրական-պահեստային համալիրի հաստատություններ, սպասարկման ոլորտի կազմակերպություններ, կինոթատրոն, թատրոն, համերգասրահ և այլն), մարդկանց զանգվածային կուտակումների տեղերում ախտահանման և լվացման համար,

16) սենքերի, սարքավորումների, գործիքների, հատուկ հագուստի, վարսավիրական, մերսման, կոսմետիկ, գեղեցկության սրահների, լվացքատների, ակումբների, սանթոդարանների և բնակչության սպասարկման այլ օբյեկտների օդի ախտահանման համար,

17) ոչ մանրէազերծ դեղերի արտադրության դեղագործական և կենսատեխնոլոգիական արդյունաբերության հաստատությունների C և D դասերի մաքրության սենքերում սարքերի և սարքավորումների ախտահանման և լվացման համար,

18) դիահերձարաններում և ախտաբանանատոմիական ծառայությունների շենքերում, դատա-բժշկական փորձաքննության հաստատություններում, կոլումբարիումներում, դիակիզարաններում, թաղման գրասենյակներում և գրասենյակ-խանութներում, սգո ծեսերի և ծիսական ու թաղման ծառայություն մատուցող կազմակերպությունների այլ շենքերում ու շինություններում մակերեսների, օբյեկտների և արտադրությունների ախտահանման համար, ինչպես նաև ավտոդիակառքերի մշակման համար,

19) սնկային վարակների կանխարգելման նպատակով կաշվից, գործվածքից, դերմատինե, ռետինե, պլաստիկից և այլ պոլիմերային ուրիշ նյութերից կոշիկների, բաղնիքի սանդալների ախտահանման համար,

20) բժշկական կազմակերպություններում, ախտորոշիչ և կլինիկական լաբորատորիաներում, արյան վերցման և փոխներարկման կայաններում ու կետերում և այլն, անհատական փաթեթավորման վնասման ժամանակ կամ պիտանելիության ժամկետն սպառված պատվաստանյութերի, ներառյալ ԲՅԺ-ն, ախտահանման համար,

21) աղբահավաքման սարքավորումների, աղբատարների, աղբի բաքերի և աղբի հավաքման տեղերի, աղբատար ուղիների ախտահանման, մաքրման, լվացման և դեզոդորացման համար,

22) կոյուղու մեջ ելք չունեցող ավտոնոմ զուգարանների կուտակային բաքերի պարունակության, ինչպես նաև ավտոնոմ զուգարանների և բիոզուգարանների խցերի մակերեսների ախտահանման համար,

23) սպասարկման ոլորտի օբյեկտներում, հանգստի ոլորտում, սոցիալական ծառայություն մատուցող հաստատությունների և մանկական հաստատությունների լվացքատներում սպիտակեղենի ախտահանման համար, այդ թվում աղտոտված արյունով և այլ կենսաբանական նյութերով,

24) բորբոսասնկերով ախտահարված օբյեկտների մշակման համար,

25) ախտահանիչ գորգերի մեջ օգտագործման համար,

26) հատուկ վտանգավոր վարակների (ժանտախտ, խոլերա, տուլյարեմիա, լեգիոնելոզ) ժամանակ տարբեր օբյեկտների ախտահանման համար:

2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

9. Աշխատանքային լուծույթները պատրաստում են ապակյա, պլաստմասե կամ էմալապատ (առանց էմալի վնասման) անոթի մեջ սենյակային ջերմաստիճանի ջրմուղի ջրում միջոցի լուծման եղանակով, ելնելով սույն հրահանգի աղյուսակ 1-ում ներկայացված հաշվարկներից: 10լ, 100լ, 1000լ ծավալներով աշխատանքային լուծույթների պատրաստումը ներկայացված է սույն հրահանգի աղյուսակ 2-ում: Աշխատանքային լուծույթների պատրաստումը բաքերի մեջ ներկայացված է սույն հրահանգի աղյուսակ 3-ում:

Միջոցի աշխատանքային լուծույթների պատրաստում

Աշխատանքային լուծույթի խտություն (%)	Միջոցի և ջրի քանակություններ, որոնք անհրաժեշտ են նշված ծավալներով լուծույթների պատրաստման համար՝			
	1 լ		10 լ	
	Միջոց	Ջուր	Միջոց	Ջուր
0,1	1,0	999,0	10,0	9990
0,2	2,0	998,0	20,0	9980
0,25	2,5	997,5	25,0	9975
0,4	4,0	996,0	40,0	9960
0,5	5,0	995,0	50,0	9950
0,75	7,5	992,5	75,0	9925
1,0	10,0	990,0	100,0	9900
1,5	15,0	985,0	150,0	9850
2,0	20,0	980,0	200,0	9800
3,0	30,0	970,0	300,0	9700

Միջոցի աշխատանքային լուծույթների պատրաստում

Աշխատանքային լուծույթի խտություն ըստ պատրաստուկի, %	Միջոցի և ջրի քանակություններ, որոնք անհրաժեշտ են պատրաստման համար՝					
	10 լ լուծույթ		100 լ լուծույթ		1000 լ լուծույթ	
	Միջոց, լ	Ջուր, լ	Միջոց, լ	Ջուր, լ	Միջոց, լ	Ջուր, լ
0,25% լուծույթ	0,025 լ	9,975 լ	0,25 լ	99,75 լ	2,5 լ	997,5 լ
0,5% լուծույթ	0,05 լ	9,95 լ	0,5 լ	99,5 լ	5 լ	995 լ

Միջոցի աշխատանքային լուծույթների պատրաստում (բաքի մեջ)

Բաքի տարողություն, լ	Միջոցի և ջրի քանակություններ, որոնք անհրաժեշտ են պատրաստման համար՝				Աշխատանքային լուծույթի ստացվող ծավալ, լ
	0,25%		0,5%		
	Միջոց, լ	Ջուր, լ	Միջոց, լ	Ջուր, լ	
300	0,056	22,444	0,113	22,387	22,5
250	0,046	18,704	0,093	18,657	18,75
200	0,037	14,963	0,075	14,850	15,0
150	0,028	11,222	0,056	11,194	11,25
100	0,018	7,482	0,037	7,463	7,5
50	0,009	3,741	0,018	3,732	3,75

3. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ ՏԱՐԲԵՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

10. Միջոցի լուծույթները կիրառվում են սենքերում մակերեսների, օդի, սարքերի, կոշտ և փափուկ գույքի, սանիտարա-տեխնիկական սարքավորման, սպիտակեղենի, սպասքի (այդ թվում՝ լաբորատոր, դեղատնային և մեկանգամյա), սպասք լվանալու պարագաների, մաքրման պարագաների և նյութերի, պացիենտի խնամքի պարագաների, անձնական հիգիենայի միջոցների, խաղալիքների, մարզագույքի, ռետինե և պոլիպրոպիլենային գորգերի, կոշիկների, բժշկական թափոնների, բժշկական նշանակության արտադրատեսակների ախտահանման համար՝ համաձայն սույն հրահանգի 8-րդ կետի:

11. Ախտահանումն իրականացնում են շփման, թրջման, ընկղմման և ոռոգման եղանակներով: Շփման, թրջման և ընկղմման եղանակներով ախտահանումն իրականացվում է մարդկանց ներկայությամբ՝ առանց անհատական պաշտպանության միջոցների օգտագործման: Մակերեսների և օբյեկտների մշակումը միջոցի լուծույթներով ոռոգման եղանակով իրականացվում է մարդկանց

բացակայությամբ և անհատական պաշտպանության միջոցների օգտագործմամբ՝ շնչառական օրգանների համար՝ B մակնիշի պատրոնով PПГ-67 կամ PY-60M տեսակի շնչադիմակներով և աչքերի համար՝ հերմետիկ ակնոցով:

12. Սենքերում մակերեսները (հատակ, պատեր և այլն), կոշտ գույքը, կահավորանքի պարագաները, սարքավորումները, սարքերի և սարքավորումների մակերեսները, և այլն, շփում են միջոցի լուծույթի մեջ թրջված անձեռոցիկով (լաթով)՝ 100 մլ՝ մակերեսի 1մ² ծախսի նորմայով: Փափուկ կահույքի, հատակի և գորգե ծածկույթների, ծակոտկեն, խավոտ և անհարթ մակերեսների մշակման ժամանակ միջոցի ծախսի նորման կազմում է 150 մլ/մ²-ից սկսած, այդ ժամանակ մակերեսները մաքրում են միջոցի լուծույթով թրջված խոզանակներով: Մշակված մակերեսների վրայից ախտահանումից հետո միջոցի աշխատանքային լուծույթի մնացորդների լվացում չի պահանջվում:

13. Օբյեկտների մշակումը ոռոգման եղանակով իրականացվում է հիդրոպուլտով, ավտոմաքսով, աէրոզոլային գեներատորով և այդ նպատակների համար թույլատրված այլ սարքերով կամ սարքավորումներով, հասնելով հավասարաչափ և առատ թրջման (ծախսի նորման՝ 150 մլ/մ² «Կվադար» տեսակի ցողացրիչի օգտագործման ժամանակ, 300 մլ/մ²՝ հիդրոպուլտի օգտագործման ժամանակ, 150 մլ/մ³՝ աէրոզոլային գեներատորների օգտագործման ժամանակ): Ժամանակակից աէրոզոլային գեներատորների օգտագործման ժամանակ միջոցի գոյացող աէրոզոլի 7-ից մինչև 30 միկրոն չափի մասնիկներով, պատրաստուկի ծախսի նորման կարող է նվազել մինչև մակերեսի 10-50 մլ/մ²: Ախտահանման պահաժամից հետո աշխատանքային լուծույթի մնացորդը անհրաժեշտության դեպքում հեռացնում են մակերեսներից չոր լաթով: Փակ, չօդափոխվող սենքերի ոռոգման եղանակով մշակման ժամանակ ազդեցության ժամանակից հետո առաջարկվում է դրանք օդափոխել 10-15 րոպե և իրականացնել խոնավ մաքրում:

14. Սանիտարա-տեխնիկական սարքավորումը (լոգարան, խեցի, զուգարանակոնք և այլն) միջոցի լուծույթով մշակում են խոզանակով՝ շփման եղանակով 150 մլ՝ 1մ² մակերեսին ծախսի նորմայով, ոռոգման եղանակով՝ 300մլ՝ 1մ² (հիդրոպուլտ, ավտոմաքս): Ազդեցության ժամանակից հետո այն լվանում են ջրով:

15. Ճաշի սպասքը (այդ թվում մեկանգամյա) ազատում են սննդի մնացորդներից և ամբողջությամբ ընկղմում ախտահանիչ լուծույթի մեջ՝ ելնելով 2 լ՝ 1 հավաքածուին հաշվարկից: Ախտահանումից հետո սպասքը ջրով լվանում են 30 վրկ և պարզաջրում 15 վրկ: Մեկանգամյա սպասքն ախտահանումից հետո օգտահանում են:

16. Լաբորատոր, դեղատնային անոթները, անոթների լվացման պարագաները ամբողջությամբ ընկղմում են ախտահանիչ լուծույթի մեջ՝ ելնելով 2 լ՝ 10 միավորին հաշվարկից: Մեծ ծավալներն ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթի մեջ այնպես, որպեսզի միջոցի լուծույթի շերտի հաստությունը արտադրատեսակների վրա լինի առնվազն 1 սմ: Ախտահանիչ պահաժամից հետո սպասքը լվանում են հոսող խմելու ջրով խոզանակով կամ սպունգով 30 վրկ և պարզաջրում 15 վրկ:

17. Սպիտակեղենը (անկողնային, անհատական, անձնակազմի արտահագուստ և այլն) թրջում են միջոցի լուծույթի մեջ 4 լ՝ 1 կգ չոր սպիտակեղենի համար հաշվարկով: Ախտահանումից հետո սպիտակեղենը և հագուստը լվանում և պարզաջրում են, մինչև փրփուրի անհետանալը:

18. Պացիենտի խնամքի պարագաները, անձնական հիգիենայի միջոցները, խաղալիքները, մարզագույքը, ռետինե և պոլիպրոպիլենային գորգերն ամբողջությամբ ընկղմում են ախտահանիչ լուծույթի մեջ կամ շփում միջոցի լուծույթով թրջված լաթով: Խոշոր խաղալիքները թույլատրվում է մշակել ոռոգման եղանակով: Ախտահանումից հետո դրանք լվանում են հոսող ջրով, խոշոր խաղալիքներն օդափոխում են առնվազն 15 րոպե:

19. Կոշիկի ներքին մակերեսը երկու անգամ շփում են ախտահանիչ լուծույթով առատորեն թրջված լաթով՝ սույն հրահանգի աղյուսակ 4-ում ներկայացված սնկային վարակների ռեժիմներին համապատասխան: Ազդեցության ժամանակից հետո մշակված մասերը շփում են ջրով առատորեն թրջված լաթով և չորացնում են: Բաղնիքի սանդալները, հողաթափերն ախտահանում են լուծույթի մեջ ընկղմման եղանակով՝ խոչընդոտելով մակերեսի վրա դրանց լողալուն: Ախտահանումից հետո ջրով պարզաջրում են:

20. Կոշիկի ներքին մակերեսը երկու անգամ շփում են ախտահանիչ լուծույթով առատորեն թրջված լաթով՝ սույն հրահանգի աղյուսակ 4-ում ներկայացված սնկային

վարակների ռեժիմներին համապատասխան: Ազդեցության ժամանակից հետո մշակված մասերը շփում են ջրով առատորեն թրջված լաթով և չորացնում են: Բաղնիքի սանդալները, հողաթափերն ախտահանում են լուծույթի մեջ ընկղմման եղանակով՝ խոչընդոտելով մակերեսի վրա դրանց լողալուն: Ախտահանումից հետո ջրով պարզաջրում են:

21. Մաքրման պարագաները թրջում են միջոցի լուծույթի մեջ, գույքը թրջում են կամ շփում են միջոցի լուծույթով թրջված լաթով: Ախտահանումից հետո պարզաջրում և չորացնում են:

22. Օբյեկտների ախտահանումը տարբեր վարակների ժամանակ իրականացնում են սույն հրահանգի աղյուսակ 4-ի ռեժիմներին համապատասխան, հատուկ վտանգավոր վարակների ժամանակ՝ աղյուսակ 6-ում նշված ռեժիմներին համապատասխան:

23. Տարբեր կազմակերպություններում հիմնական մաքրումն իրականացնում են աղյուսակ 5-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

24. Բորբոսասնկերի դեմ պայքարի նպատակով սենքերում մակերեսները նախ մաքրում են բորբոսից, այնուհետև երկու անգամ 15 րոպե ընդմիջումով շփում միջոցի 0,25% կամ 0,5%-ոց լուծույթով թրջված լաթով (ծախսի նորման 100 մլ/մ²), կամ ոռոգում «Կվադար» տեսակի սարքից՝ 150 մլ/մ² հաշվարկով: Ախտահանման պահաժամը մշակումից հետո՝ համապատասխանաբար 60 և 30 րոպե է: Բորբոսի հետագա աճը կանխարգելելու համար մշակումը կրկնում են 1 ամիս անց: Օբյեկտների մշակման ռեժիմները բորբոսային ախտահարումների ժամանակ ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 7-ում:

25. Մակերեսների ախտահանումը կոմունալ, սպորտային, մշակութային, ադմինիստրատիվ օբյեկտներում հանրային սննդի և առևտրի օբյեկտներում, արդյունաբերական շուկաներում, մանկական և այլ հաստատություններում, ինչպես նաև՝ սառցախցերի, սառեցնող սարքավորումների և սառնարանային սենքերի ախտահանումը հաստատություններում և ցանկացած ուղղվածության կազմակերպություններում, կենցաղային սենքերի հիմնական մաքրումը իրականացնում են սույն հրահանգի աղյուսակ 4-ում ներկայացված մանրէային

(բացառությամբ տուբերկուլոզի) վարակների ժամանակ առաջարկվող ռեժիմներին համապատասխան: Քրեակատարողական հիմնարկներում ախտահանումն իրականացվում է սույն հրահանգի աղյուսակ 4-ում ներկայացված տուբերկուլոզի ժամանակ առաջարկվող ռեժիմներին համապատասխան:

26. Սպասարկման ոլորտի օբյեկտներում (վարսավիրանոց, գեղեցկության սրահ, կոսմետիկ սրահ և այլն) մակերեսների, սարքավորումների, գործիքների ախտահանումն իրականացվում է սույն հրահանգի աղյուսակ 4-ում ներկայացված վիրուսային և սնկային վարակների ժամանակ առաջարկվող ռեժիմներին համապատասխան:

1) Սանրները, խոզանակները, մազերը կտրելու մկրատները յուրաքանչյուր հաճախորդից հետո լվանում են հոսող ջրով, այնուհետև տեղավորում սահմանված կարգով օգտագործման թույլատրված և կիրառման հրահանգ ունեցող մանրէազերծիչի (ստերիլիզատորի) մեջ, կամ թրջում միջոցի լուծույթի մեջ՝ սույն հրահանգի աղյուսակ 4-ում ներկայացված սնկային վարակների (դերմատոֆիտիա) ժամանակ առաջարկվող ռեժիմներով:

2) Ոտքերի թասերը և ձեռքերի թասերը յուրաքանչյուր հաճախորդից հետո ենթարկվում են ախտահանման ամբողջությամբ ընկղմելով լուծույթի մեջ՝ սույն հրահանգի աղյուսակ 4-ում ներկայացված սնկային վարակների (դերմատոֆիտիա) ժամանակ առաջարկվող ռեժիմներով:

3) Մաշկի կամ լորձաթաղանթների վնասման ռիսկի հնարավորությամբ գործողությունների (մատնահարդարում, ոտնահարդարում, դաջվածք, պիրսինգ, կոսմետոլոգիական ծառայություններ) ժամանակ օգտագործվող գործիքները յուրաքանչյուր հաճախորդից հետո, առանց նախապես ջրով լվանալու, տեղավորում են ախտահանիչ լուծույթի մեջ: Ախտահանումն իրականացնում են սույն հրահանգի աղյուսակ 4-ում ներկայացված վիրուսային վարակների ժամանակ կիրառվող ռեժիմներին համապատասխան: Ախտահանումից հետո գործիքները ենթարկում են նախամանրէազերծման և մանրէազերծման:

27. Բաղնիքում, շոգեբաղնիքում, լողավազանում, ակվապարկում, լվացքատանը մակերեսների ախտահանումն իրականացնում են սույն հրահանգի աղյուսակ 4-ում

ներկայացված դերմատոֆիտիաների ժամանակ առաջարկվող ռեժիմներով կամ, անհրաժեշտության դեպքում՝ բորբոսային ախտահարումների ռեժիմներին համապատասխան (սույն հրահանգի 25-րդ կետ):

28. Սանիտարական տրանսպորտի և սննդամթերքի տեղափոխման տրանսպորտի օբյեկտների մշակումն իրականացնում են շփման կամ ոռոգման եղանակներով՝ սույն հրահանգի աղյուսակ 4-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Տեսանելի օրգանական աղտոտվածությունների բացակայության ժամանակ սանիտարական տրանսպորտի կանոնավոր կանխարգելիչ մշակումը իրականացնում են մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի) վարակների ժամանակ մակերեսների մշակման ռեժիմներով՝ սույն հրահանգի աղյուսակ 4-ին համապատասխան: Վարակիչ հիվանդների տեղափոխման սանիտարական տրանսպորտը մշակում են տվյալ վարակի ժամանակ առաջարկվող ռեժիմներին համապատասխան, իսկ անհայտ ծագման վարակի ժամանակ՝ վիրուսային վարակների ժամանակ առաջարկվող ռեժիմներով՝ սույն հրահանգի աղյուսակ 4-ին համապատասխան: Սննդամթերքի տեղափոխման ավտոտրանսպորտի ախտահանումից հետո մշակված մակերեսները լվանում են ջրով և սրբում՝ մինչև չորանա:

29. Բժշկական կազմակերպությունների (այդ թվում՝ ինֆեկցիոն բաժանմունքների, մաշկավեներաբանական, ֆթիզիատրիական և սնկաբանական հիվանդանոցների, սանիտարական տրանսպորտի օբյեկտների, ինպես նաև ախտածնության 3-4-րդ խմբի մանրէներով աշխատող լաբորատորիաների և այլ կազմակերպությունների) բժշկական, սննդային և այլ թափոնների ախտահանումն իրականացնում են գործող նորմատիվ ակտերի պահանջներին՝ սույն հրահանգի աղյուսակ 8-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան՝ հետագա օգտահանումով: Միջոցն օգտագործվում է նաև ֆթիզիատրիական և սնկաբանական բժշկական կազմակերպությունների և բաժանմունքների A, B և B դասի բժշկական թափոնների ախտահանման համար:

1) Օգտագործված վիրակապական նյութը, անձեռոցիկները, բամբակե խճուժները, մեկանգամյա օգտագործման սպիտակեղենը ընկղմում են միջոցի

լուծույթով առանձին տարայի մեջ: Ախտահանումից հետո թափոններն օգտահանում են:

2) Մեկանգամյա օգտագործման բժշկական նշանակության արտադրատեսակների (այդ թվում սրվակների և ներարկիչների՝ պատվաստումից հետո) ախտահանումն իրականացվում է պլաստմասե կամ էմալապատ (առանց էմալի վնասման) կափարիչով փակվող տարաներում: Ախտահանման ժամանակ արտադրատեսակներն ամբողջությամբ ընկղմում են միջոցի լուծույթի մեջ: Քանդվող արտադրատեսակները ընկղմում են միջոցի մեջ քանդված վիճակում: Փականային մասեր ունեցող արտադրատեսակները ընկղմում են բաց վիճակում, նախապես դրանցով անելով մի քանի աշխատանքային շարժում միջոցի լուծույթի մեջ՝ լուծույթը արտադրատեսակի դժվարհասանելի մասեր ավելի լավ թափանցելու համար: Թրջման ժամանակ (ախտահանիչ պահաժամ) խողովակներն ու խոռոչները լցվում են (առանց օդային խցանների) լուծույթով: Լուծույթի շերտի հաստությունն արտադրատեսակների վրա պետք է լինի առնվազն 1 սմ: Ախտահանումից հետո արտադրատեսակները հանվում են լուծույթով տարայից և օգտահանվում:

3) Սննդի մնացորդները խառնում են աշխատանքային լուծույթի հետ 1:1 հարաբերությամբ, պահում են ազդեցության ժամանակի չափով:

4) Հեղուկ թափոնները, վացման ջրերը (ներառյալ էնդոսկոպիական վացման ջրերը), արյունը, շիճուկը, պացիենտի արտադրությունները (խորխ, փսխման զանգվածներ, մեզ, արտաթորանք և այլն) խառնում են ախտահանման համար անհրաժեշտ խտությամբ աշխատանքային լուծույթի հետ 1 մաս թափոն 2 մաս լուծույթին հարաբերությամբ: Ախտահանիչ լուծույթը լցվում է անմիջապես տարայի մեջ կամ լցվում այն մակերեսի վրա, որտեղ գտնվում է կենսաբանական նյութը: Այնուհետև պահվում է ազդեցության ժամանակը՝ ախտահանման օգտագործվող ռեժիմին համապատասխան: Տարայի մեջ ախտահանման ժամանակ այն պետք է փակ լինի կափարիչով: Բոլոր աշխատանքները անձնակազմի կողմից իրականացվում են ռետինե ձեռնոցով՝ պահպանելով հակահամաճարակային կանոնները: Ախտահանիչ պահաժամից հետո ախտահանված արյան (արտադրությունների) խառնուրդը միջոցի աշխատանքային լուծույթի հետ օգտահանվում է որպես բժշկական թափոն՝ հաշվի

առնելով գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջները: Օգտահանման այլ հնարավորությունների բացակայության ժամանակ խառնուրդը լցվում է կոյուղու մեջ:

5) Հիվանդի արտադրությունների անոթները կամ այն մակերեսը, որի վրա իրականացրել են ախտահանված կենսաբանական նյութի վերցնում և ախտահանում, մշակում են միջոցի լուծույթով՝ սույն հրահանգի աղյուսակ 8-ին համապատասխան՝ ընկղմման (անոթ) կամ շփման (մակերես) եղանակով: Այնուհետև հիվանդի արտադրությունների տարան, լաբորատոր անոթները և մակերեսները, համապատասխանաբար պարզաջրում են հոսող ջրով կամ շփում ջրով թրջված մաքուր լաթով:

6) Պատվաստանյութերը, այդ թվում ԲՑԺ-ի, անհատական փաթեթավորման վնասման ժամանակ կամ պիտանելիության ժամկետի սպառվելուց հետո, ախտահանում են 3%-ոց աշխատանքային լուծույթի մեջ 90 րոպե ընկղմելով, այնուհետև օգտահանում համաձայն գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջների:

7) Գործող փաստաթղթերին համապատասխան, օգտագործման համար ոչ պիտանի դոնորական արյունը և արյան պատրաստուկները օգտահանում են ավտոկլավացմամբ: Մինչդեռ չվարակված, սակայն պիտանելիության ժամկետն անց մակարդուկներով արյունը, դոնորական արյունը և արյան պատրաստուկները ախտահանում են միջոցի 0,25%-ոց աշխատանքային լուծույթի հետ խառնելու եղանակով՝ 1 մաս արյունը 2 մաս լուծույթին հարաբերությամբ: Խառնուրդը պահում են 30 րոպե և օգտահանում՝ հաշվի առնելով գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջները: Բժշկական տգրուկները տգրուկաբուժությունից հետո (դասակարգվում են որպես Ե դասի բժշկական թափոններ) ընկղմում են միջոցի 0,25%-ոց աշխատանքային լուծույթի մեջ 30 րոպե ազդեցության ժամանակով, այնուհետև օգտահանում՝ համաձայն գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջների:

8) Բժշկական թափոնների հավաքման և հեռացման բեռնարկերը մշակում են շփման կամ ոռոգման եղանակով:

9) Բժշկական թափոնների ախտահանման ռեժիմները հատուկ վտանգավոր վարակների (ժանտախտ, խոլերա, տուլյարեմիա, լեգիոնելոզ) ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 6-ում:

30. Կուվեզների և դրանց կից հարմարանքների մշակումն իրականացնում են առանձին սենքում և երեխաների բացակայության պայմաններում: Կուվեզի և դրա հարմարանքների մակերեսները մանրակրկիտ շփում են միջոցով թրջված գործվածքային անձեռոցիկներով 100 մլ/մ² ծախսի նորմայով: Ախտահանումից հետո կուվեզի մակերեսները երկու անգամ շփում են մանրէազերծ ջրով առատ թրջված մանրէազերծ գործվածքային անձեռոցիկներով (տակաշորով): Յուրաքանչյուր լվացումից հետո մակերեսը մանրէազերծ անձեռոցիկով կամ մանրէազերծ տակաշորով սրբում են մինչև չորանա: Մշակումից հետո կուվեզներն օդափոխում են 15 րոպե: Հարմարանքները՝ խոնավացուցիչի ռեգերվուարը, մետաղական ալեմարիչը, օդահավաք խողովակները, ռետինե խողովակները, թթվածնի պատրաստման հանգույցները ամբողջությամբ ընկղմում են միջոցի լուծույթով տարայի մեջ: Ախտահանումից հետո բոլոր հարմարանքները լվանում են երկու անգամ մանրէազերծ ջրի մեջ 5 րոպե ընկղմելու եղանակով, ջուրը մղելով (յուրաքանչյուրի ժամանակ) խողովակների և փողերի միջով: Հարմարանքները չորացնում են մանրէազերծ գործվածքային անձեռոցիկներով: Կուվեզների մշակումն իրականացնում են գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Կուվեզների մշակման ժամանակ հաշվի է առնվում կուվեզներ արտադրողի հրահանգները: Կուվեզների մշակումն իրականացնում են սույն հրահանգի աղյուսակ 4-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

31. Նարկոզա-շնչառական և ներշնչական (ինհալացիոն) սարքերի համալրող մասերի, անեսթեզիոլոգիական սարքավորումների, ՈԻՁՀ տվիչների մշակումն իրականացնում են գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Համալրող մասերը (էնդոտրախեալ փողերը, տրախեոտոմիկ կանյուլաները, բերան-ըմպանային օդատարները, դիմակները, անեսթեզիոլոգիական ռետինե խողովակները) ազդեցության ժամանակով ընկղմում են միջոցի լուծույթի մեջ: Ախտահանումից հետո դրանք հանում են լուծույթով տարայի միջից և լվանում միջոցի մնացորդներից հաջորդաբար մանրէազերծ ջրի երկու բաժինների մեջ՝

յուրաքանչյուրում 5-ական թույլ, այնուհետև չորացնում և պահում ասեպտիկ պայմաններում: Մշակումն իրականացնում են սույն հրահանգի աղյուսակ 4-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

32. Ատամնաբուժության մեջ թքարտաձիճները և թքարտաձիճ համակարգերն ախտահանում են աշխատանքային օրվա վերջում՝ 1 և միջոցի 0,25%-ոց աշխատանքային լուծույթ 2 թույլ բաց թողնելով սարքի թքարտաձիճ համակարգի միջով: Այնուհետև միջոցի լուծույթը թողնում են նրա մեջ ազդեցության համար՝ համապատասխանաբար 15 թույլ (այդ ընթացքում արտաձծող համակարգը չեն օգտագործում) կամ գիշերվա ընթացքում: Ախտահանման ազդեցության պահաժամից հետո լուծույթը համակարգի միջից թափում են և լվանում այն հոսող խմելու ջրով 2 թույլ: Գործողությունն իրականացնում են օրական 1-2 անգամ, այդ թվում աշխատանքային հերթափոխից հետո:

33. Օդի ախտահանումն իրականացվում է համապատասխան տեխնիկական սարքավորումներով՝ միջոցի աշխատանքային լուծույթի ցողացրման կամ աէրոզոլացման եղանակով՝ սույն հրահանգի աղյուսակ 9-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան, 10 մ/մ³ ծախսի նորմայով: Նախապես իրականացնում են մակերեսների ախտահանում, սենքը հերմետիկ դարձնում՝ փակում դռներն ու լուսամուտները, անջատում ներհոս-արտաձիգ օդափոխությունը: Ախտահանիչ պահաժամից հետո աշխատանքային լուծույթի մնացորդը անհրաժեշտության դեպքում հեռացնում են մակերեսներից չոր լաթով, իսկ սենքերն օդափոխում 10-15 թույլ:

34. Դիահերձարաններում և ախտաբանանատոմիական ծառայությունների շենքերում, դատա-բժշկական փորձաքննության, կոլումբարիումներում, դիահերձարաններում, թաղման գրասենյակներում և գրասենյակ-խանութներում, սզո արարողությունների շենքերում, թաղման և ծիսական ծառայություն մատուցող այլ կազմակերպություններում մակերեսների և օբյեկտների ախտահանման համար միջոցն օգտագործվում է սույն հրահանգի աղյուսակ 4-ում ներկայացված վիրուսային վարակների ժամանակ առաջարկվող ռեժիմներին համապատասխան: Ավտոդիակառքերը մշակում են սույն հրահանգի աղյուսակ 4-ում ներկայացված սանիտարական տրանսպորտի մշակման համար վիրուսային վարակների ժամանակ

առաջարկվող ռեժիմներին համապատասխան: Արտադրությունները և այլ օրգանական աղտոտվածությունները ախտահանում և օգտահանում են սույն հրահանգի աղյուսակ 8-ում ներկայացված ռեժիմներով՝ 30-րդ կետին համապատասխան:

35. Օդափոխության և օդորակման համակարգերի ախտահանումն իրականացնում են դրանց՝ ամբողջությամբ անջատված պայմաններում (բացառությամբ սույն կետի 9-րդ ենթակետի) օդափոխության ուղղությամբ ճարտարագետների ընդգրկմամբ և ղեկավարությամբ, սույն հրահանգի աղյուսակ 9-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Օդափոխության և օդորակման համակարգերի կանխարգելիչ ախտահանումն իրականացնում են եռամսյակը 1 անգամ՝ գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Օդափոխության և օդորակման համակարգերի ընթացիկ և եզրափակիչ ախտահանումն իրականացնում են ըստ համաճարակաբանական ցուցումների:

1) Մշակման ժամանակ հատուկ ուշադրություն են դարձնում օդափոխության և օդորակման համակարգերի ճեղքերում, նեղ և դժվարհասանելի տեղերում մանրէների կուտակման տեղերին: Ախտահանման ենթարկում են՝

ա) օդատարները, օդափոխիչ հորերը, օդափոխիչ համակարգերի հովհարների վանդակաճաղերը և մակերեսները,

բ) օդորակիչների և սենքերի օդորակման համակարգերի կառուցվածքային տարրերի, սպլիտ-համակարգերի, մոլտիզոնային սպլիտ-համակարգերի, տանիքի օդորակիչների մակերեսները,

գ) օդորակիչների օդի մաքրման և սառեցման խցերը,

դ) մաքրման պարագաները:

2) Ախտահանումն իրականացնում են շփման, թրջման, ընկղմման, ոռոգման և աէրոզոլացման եղանակներով: Օգտագործում են սենյակային ջերմաստիճանի միջոցի աշխատանքային լուծույթներ:

3) Ախտահանումից առաջ իրականացնում են մակերեսների լվացում օճառա-սոդային լուծույթով: Կանխարգելիչ ախտահանման համար օգտագործում են 0,25%

կամ 0,5% միջոցի ջրային լուծույթ ոռոգման կամ շփման եղանակով՝ համապատասխանաբար 30 կամ 15 րոպե ախտահանման պահաժամով:

4) Ախտահանումից առաջ իրականացնում են մակերեսների վաճում օճառա-սողային լուծույթով՝ հետագայում վանալով մաքրելով, քանի որ միջոցն անհամատեղելի է օճառների հետ: Որպես վաճող լուծույթ՝ կարելի է նաև օգտագործել միջոցի 0,05%-ոց լուծույթ: Կանխարգելիչ ախտահանման համար օգտագործում են 0,1%, 0,25% կամ 0,5% միջոցի ջրային լուծույթ՝ ոռոգման կամ շփման եղանակով համապատասխանաբար 70, 30 կամ 15 րոպե ախտահանման պահաժամով:

5) Օդային ֆիլտրը կամ վաճվում է օճառա-սողային լուծույթում և ախտահանվում 0,25% միջոցի ջրային լուծույթի մեջ ընկղմման եղանակով 60 րոպե կամ 0,5% լուծույթի մեջ՝ 15 րոպե, կամ փոխվում է: Ածխե ֆիլտրը ենթակա է փոխման:

6) Օդորակիչի ռադիատորի ճաղավանդակը և կոնդենսատի կուտակիչը շփում են ախտահանիչ լուծույթով թրջված լաթով:

7) Օդորակիչների և օդորակման համակարգերի կառուցվածքային տարրերի մակերեսները շփում են միջոցի 0,25%-ոց լուծույթով թրջված լաթով, 100 մլ/մ² ծախսի նորմայով:

8) Օբյեկտների մշակումը ոռոգման եղանակով իրականացնում են հիդրոպոլտով կամ ավտոմաքսով 300 մլ/մ² ծախսի նորմայով, այլ սարքերով («Կվազար» տեսակի)՝ 150 մլ/մ² ծախսի նորմայով: Ազդեցության ժամանակից հետո աշխատանքային լուծույթի մնացորդը մակերեսից հեռացնում են չոր լաթով:

9) Օդորակման համակարգերի օդի մաքրման ու սառեցման խցիկն ախտահանում են ոռոգման եղանակով, հանված ֆիլտրող տարրով, օդորակիչի աշխատելու պայմաններում՝ սենքից օդորակիչի մեջ օդի մուտք գործելու ուղղությամբ:

10) Սենքերի հովհարիչների մակերեսները և օդափոխության համակարգերի կառուցվածքային տարրերի մակերեսները շփում են միջոցի լուծույթով թրջված լաթով:

11) Սենքերի օդափոխության համակարգերի օդատարները ախտահանում են «Կվազար» տեսակի ցողացրիչով ոռոգման եղանակով՝ 150 մ/մ² ծախսի նորմայով, հաջորդաբար 1-2 մ սեզմենտներով:

12) Սենքերի օդորակիչների և օդափոխության համակարգերի օգտագործված զտող տարրերը (ֆիլտր) թրջում են միջոցի աշխատանքային լուծույթի մեջ: Ախտահանումից հետո ֆիլտրերը օգտահանում են:

13) Օդափոխիչ սարքավորումները շփում են միջոցի լուծույթով թրջված լաթով կամ մաքրում խոզանակով, կամ ոռոգում են:

14) Ախտահանումից հետո մշակված օբյեկտները լվանում են ջրմուղի ջրով լաթով, չորացնում չոր լաթով:

15) Մաքրման պարագաները թրջում են միջոցի աշխատանքային լուծույթի մեջ: Ախտահանիչ պահաժամից հետո այն պարզաջրում են և չորացնում:

16) Լեգիոնելլոզի հարուցիչներով բաղարկման կասկածի ժամանակ մշակումն իրականացնում են սույն հրահանգի աղյուսակ 6-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

36. Ոչ մանրէազերծ դեղերի արտադրության դեղագործական և կենսատեխնոլոգիական արդյունաբերության C և D դասերի մաքրության սենքերում կանխարգելիչ ախտահանումն իրականացնում են սույն հրահանգի աղյուսակ 4-ում ներկայացված ռեժիմներին (մանրէային վարակների ժամանակ, բացառությամբ տուբերկուլոզի) համապատասխան:

37. Օդի ախտահանումն իրականացնում են համապատասխան տեխնիկական սարքավորումներով՝ միջոցի աշխատանքային լուծույթներով ցողացրման կամ աերոզոլացման եղանակով, սույն հրահանգի աղյուսակ 9-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան, 10 մ/մ³ ծախսի նորմայով: Նախօրոք իրականացնում են մակերեսների ախտահանում, սենքը հերմետիկ են դարձնում՝ փակում են դռներն ու լուսամուտները, անջատում ներծիգ-արտահոս օդափոխությունը: Ախտահանիչ պահաժամից հետո աշխատանքային լուծույթի մնացորդը անհրաժեշտության

դեպքում հեռեցնում են մակերեսներից չոր լաթով, իսկ սենքերն օդափոխում 10-15 րոպե:

38. Ախտահանիչ գորգերի մեջ օգտագործման համար օգտագործում են 0,25% միջոցի լուծույթ: Լցվող միջոցի լուծույթի ծավալը կախված է գորգի չափից և նշված է ախտահանիչ գորգի շահագործման հրահանգի մեջ: Աշխատանքային լուծույթի փոխումը կախված է գորգի օգտագործման ինտենսիվությունից: Միջինում միջոցի լուծույթը փոխվում է 3 օրը մեկ անգամ:

39. Մակաբուծային հիվանդությունների (նախակենդանիների ցիստեր և օոցիստեր, հելմինթների ձվիկներ ու թրթուրներ) հարուցիչներով բաղարկված հողի ախտահանումը (դեզինվազիան) իրականացվում է միջոցի լուծույթներով, հողի դեզինվազիան ապահովող ռեժիմներով. «Ֆարմդեզին ամինո» միջոցի 5%-ոց խտության լուծույթով 3 օր ազդեցության ժամանակով և 4 լիտր՝ հողի մեկ քառակուսի մետրի համար ծախսի նորմայով: Հողի մշակման ժամանակ առաջնորդվում են գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներով:

40. Մակաբուծային հիվանդությունների (նախակենդանիների ցիստեր և օոցիստեր, սրատուտների, հելմինթների ձվիկներ ու թրթուրներ) հարուցիչներով բաղարկված կենցաղային իրերի, խաղալիքների, սենքերի, լաբորատոր անոթների և լաբորատոր սարքավորումների ախտահանումը (դեզինվազիան) իրականացնում են միջոցի լուծույթներով՝ գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

1) Կոշտ խաղալիքները (ռետինե, պլաստմասե և փայտյա), խեցիները, ծորակները, դռան բռնակները, գիշերանոթները լվանում են միջոցի 1%-ոց լուծույթով: Փափուկ խաղալիքները և այլ իրերը մանրակրկիտ մաքրում են փոշեկուլով և միջոցի 1%-ոց լուծույթով թրջված խոզանակով: Ազդեցության ժամանակը 60 րոպե է: Խաղալիքներն այնուհետև պարզաջրում են հոսող ջրով առնվազն 3 րոպե և չորացնում են:

2) Արտաթորանքով, լեղիով, խորխով, կեղտաջրերով և այլն անոթները աշխատանքային օրվա ընթացքում տեղավորում են էմալպատ կյուվետների մեջ կամ առանձին սեղանների վրա (պլաստիկե կամ այլ՝ ախտահանման լավ ենթարկվող

ծածկույթով ստացիոնար կամ շարժական): Կենսաբանական թափոնների վրա լցնում են միջոցի 2%-ոց լուծույթ 1:2 հարաբերությամբ և պահում 60 րոպե, այնուհետև օգտահանում են:

3) Օգտագործված առարկայական ապակիները, կաթոցիկները, խցանները, փորձանոթները, ապակե ձողերը, քիմիական բաժակները և այլն դասավորում են ամբողջ աշխատանքային օրվա տևողությամբ 1%-ոց միջոցի լուծույթով տարաների մեջ: Լաբորատոր անոթների եզրափակիչ ախտահանումն իրականացվում է միջոցի 0,5%-ոց լուծույթի մեջ եռացնելու եղանակով (եռալու պահից առնվազն 30 րոպե): Ախտահանումից հետո անոթները լվանում և մանրէազերծում են:

4) Բամբակ-թանգիվե նյութերը, թղթե ֆիլտրերը և մեկանգամյա փայտե ձողերը ախտահանում են միջոցի 1%-ոց լուծույթի մեջ 60 րոպե, իսկ այնուհետև ոչնչացվում են այրման կամ աղբի բեռանարկղի մեջ նետելու եղանակով: Լաբորատոր սեղանների աշխատանքային մակերեսներն ախտահանում են 70%-ոց սպիրտով (էթիլ կամ իզոպրոպիլ) հետագա ֆլամբիրացմամբ:

5) Սարքավորումների (ցենտրիֆուգ, մանրադիտակ, սառնարան և այլն) ախտահանումն իրականացվում է միջոցի 1%-ոց լուծույթով շփման եղանակով: Ազդեցության ժամանակը 60 րոպե է:

6) Լաբորատոր սենքերի ընթացիկ մաքրումն իրականացվում է ամեն օր աշխատանքային օրվա վերջում խոնավ եղանակով՝ կիրառելով միջոցի 0,5%-ոց լուծույթ:

7) Մաքրման պարագաները (լաթ, խոզանակ և այլն) եռացնում են միջոցի 0,25%-ոց լուծույթի մեջ:

41. Միջոցը կիրառվում է աղբահավաք սարքավորումների, աղբատարների, աղբի բաքերի և աղբահավաքատեղիների ախտահանման, մաքրման, լվացման և դեզոդորացման համար, կոյուղու մեջ ելք չունեցող ավտոնոմ զուգարանների կուտակային բաքերի, ինչպես նաև ավտոնոմ զուգարանների և բիոզուգարանների խցերում մակերեսների ախտահանման համար:

- 1) Աղյուսակ 2-ում ներկայացված են միջոցի և ջրի քանակները միջոցի անհրաժեշտ խտության աշխատանքային լուծույթների պատրաստման համար:
- 2) Միջոցի աշխատանքային լուծույթը կարելի է պատրաստել առանձին տարայի մեջ, որից այն վերցվում է հատուկ ավտոտրանսպորտի կամ աղբատարների ցիստեռնները լիցքավորելու համար կամ սպառման տեղերում անմիջապես զուգարանի բաքի մեջ նրա լիցքավորման ժամանակ, աղբահավաքատեղիներում, աղբի բաքի մեջ:
- 3) Աշխատանքային լուծույթ պատրաստելու համար միջոցի անհրաժեշտ քանակությունը լցնում են ջրմուղի ջրի չափված քանակության վրա և խառնում: Լուծույթների պատրաստման հարմարավետության համար կարող են կիրառվել տարբեր մոդիֆիկացիաների դոզավորող համակարգեր:
- 4) Բաքերի լիցքավորումն աշխատանքային լուծույթներով կարող է իրականացվել ինչպես ձեռքով, այնպես էլ հատուկ ավտոմեքենաներով: Լիցքավորման տեխնոլոգիան և եղանակը նախատեսված են տվյալ տեսակի զուգարանների, աղբահավաք սարքավորումների ծառայության կանոնակարգով և տեխնիկական փաստաթղթերով:
- 5) Թափոններով լցված լինելը չպետք է գերազանցի բաք-հավաքատեղիի ընդհանուր ծավալի 75%-ը: Բաք-հավաքման տեղերի պարունակության ախտահանման համար կիրառվում է միջոցի 0,25%-ոց և 0,5%-ոց լուծույթներ: Լցվող լուծույթի քանակը և թափոնների ծավալը պետք է լինի 1:10-ի հարաբերությամբ: Այդպիսի հարաբերության ժամանակ թափոնների ախտահանումը բաքը լցվելուց հետո ապահովվում է համապատասխանաբար 60 և 30 րոպե անց (ախտահանման էքսպոզիցիա՝ ազդեցության ժամանակ): Բաքերից ֆեկալ զանգվածի հեռացումը իրականացվում է ասսենիզացիոն մեքենայով ոչ շուտ, քան միջոցի 0,25%-ոց և 0,5%-ոց աշխատանքային լուծույթների ներմուծումից համապատասխանաբար 60 և 30 րոպե անց: Բեռնաթափումից հետո բաքերը լվանում են ջրով:
- 6) Սույն հրահանգի աղյուսակ 3-ում ներկայացված են անմիջականորեն զուգարանի բաքի մեջ աշխատանքային լուծույթի պատրաստման համար անհրաժեշտ միջոցի և ջրի հաշվարկային քանակները, կախված բաքի ծավալից,

աղբահավաքատեղիում կամ աղբի բաքում՝ ոչ ավելի, քան բաքի ծավալի 75%-ի չափով լցվելու դեպքում և ստացված լուծույթի ու թափոնների 1:10 հարաբերությամբ:

7) Բաք-հավաքատեղիների արտաքին մակերեսը, ավտոնոմ զուգարանների խցիկների, աղբի բաքերի մակերեսները մշակում են միջոցի 0,25%-ոց կամ 0,5%-ոց լուծույթով, խոզանակով կամ լաթով կամ ոռոգում են «Կվազար» տեսակի ցողացրիչով՝ 150 մլ/մ² ծախսի նորմայով: Ախտահանման ժամանակը կազմում է համապատասխանաբար 60 և 30 րոպե:

4. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՆԱԽԱՄԱՆՐԵԱԶԵՐԾՄԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԿՑՎԱԾ

42. Բժշկական նշանակության արտադրատեսակների ախտահանումը, այդ թվում դրանց նախամանրէազերծումով, իրականացնում են պլաստմասե կամ էմալապատ (առանց էմալի վնասման) փակվող կափարիչով տարաների մեջ: Բժշկական նշանակության արտադրատեսակների մշակումն իրականացվում է հակահամաճարակային միջոցառումների պահպանմամբ և անձնակազմի անհատական պաշտպանությամբ (ձեռնոցով):

43. Բժշկական նշանակության արտադրատեսակներն ամբողջությամբ ընկղմվում են միջոցի աշխատանքային լուծույթի մեջ անմիջապես դրանց օգտագործումից հետո, ապահովելով արտադրատեսակների վրայից տեսանելի աղտոտվածությունների անհապաղ հեռացումը մակերեսներից գործվածքային (թանգիվե) անձեռոցիկներով: Օգտագործված անձեռոցիկները տեղավորում են առանձին տարայի մեջ, ախտահանում են, այնուհետև օգտահանում: Արտադրատեսակների խողովակներն ու խոռոչները լցնում են լուծույթով՝ խուսափելով օդային խցանների առաջացումից: Խողովակների միջով հաջորդաբար մղում են միջոցի լուծույթ և ներարկիչով կամ այլ հարմարանքով օդ փչում: Գործողությունը կրկնում են մի քանի անգամ, մինչև կենսաձին աղտոտվածությունների ամբողջական հեռացումը: Քանդվող արտադրատեսակները ընկղմում են լուծույթի մեջ քանդված վիճակում: Փականային մասեր ունեցող արտադրատեսակները ընկղմում են բաց վիճակում, լուծույթի մեջ

նախապես անելով մի քանի աշխատանքային շարժում՝ արտադրատեսակի դժվարհասանելի մասեր լուծույթի լավ թափանցման համար: Միջոցի շերտի հաստությունը արտադրատեսակների վրա կազմում է առնվազն 1 սմ:

44. Ախտահանիչ պահաժամից հետո արտադրատեսակները հանում են տարայից և լվանում դրանք միջոցի մանցորդներից հոսող խմելու ջրով, առնվազն 5 րոպե, հատուկ ուշադրություն դարձնելով խողովակների լվացման վրա (ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով) և թույլ չտալով բացթողնված ջրի լցվելը լվացվող արտադրատեսակներով տարայի մեջ:

45. Բժշկական նշանակության արտադրատեսակների մշակումը մեքենայացված եղանակով իրականացնում են ԵԱՏՄ տարածքում սահմանված կարգով գրանցված ՈՒՁՄ (ՄՅՈ)՝ ուլտրաձայնային մշակման ցանկացած տեսակի սարքավորման մեջ:

46. Բժշկական նշանակության արտադրատեսակների ախտահանման ռեժիմները համապատասխան վարակների ժամանակ ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 10-ում: Բժշկական նշանակության արտադրատեսակների նախամանրէազերծման հետ համակցված ախտահանման ռեժիմները ձեռքային և մեքենայացված եղանակներով ներկայացված են համապատասխանաբար աղյուսակներ 11-12-ում:

47. Միջոցի 0,25%-ոց լուծույթով նախապես լվացված արտատպվածքները, ատամնապրոթեզային կիսահումքերը ախտահանում են միջոցի լուծույթի մեջ ընկղմման եղանակով՝ սույն հրահանգի աղյուսակ 11-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Ախտահանումից հետո արտատպվածքները, ատամնապրոթեզային կիսահումքերը լվանում են հոսող ջրով 0,5-ական րոպե յուրաքանչյուր կողմից կամ ընկղմում ջրով տարայի մեջ 5 րոպե, որից հետո չորացնում են օդում: Միջոցի աշխատանքային լուծույթն օգտագործվում է բազմակի մեկ շաբաթվա ընթացքում, պայմանով, որ ծեփապատճենների գումարային քանակությունը 1 աշխատանքային թասիկի մեջ չի գերազանցում 50 հատը: Մեկ շաբաթի ընթացքում արտաքին տեսքի փոփոխության առաջին նշանների ի հայտ գալու ժամանակ լուծույթը փոխվում է:

48. Կոշտ և ճկուն էնդոսկոպները և դրանց կից գործիքները վարակիչ հիվանդի համար կիրառելուց հետո ենթարկում են միջոցով ախտահանման, այդ թվում նախամանրէազերծման (եզրափակիչ) հետ համակցված: Դրա ժամանակ հաշվի են առնվում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջները, ինչպես նաև էնդոսկոպիական սարքավորում արտադրողների առաջարկները:

49. Էնդոսկոպների ախտահանումը, այդ թվում մաքրման հետ համակցված, իրականացվում է դրանց նախնական մաքրումից հետո: Մշակումն իրականացնում են էնդոսկոպիական գործողություններից անմիջապես հետո (առաջարկվում է թույլ չտալ կենսաբանական աղտոտվածությունների չորացում), խստորեն հետևելով ստորև շարադրված առաջարկներին:

1) Տեսանելի աղտոտվածությունները էնդոսկոպի արտաքին մակերեսից, այդ թվում օբյեկտիվից, հեռացնում են միջոցի լուծույթով թրջված գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով, կամ հատուկ «ՖԱԳՈՎԱՅՊԱ ՍՊՈՐ» տեսակի լվացող-ախտահանող անձեռոցիկներով, կառավարման բլոկից դեպի դիստալ եզրը ուղղությամբ:

2) Էնդոսկոպի խողովակները լվանում են, ճկուն էնդոսկոպի դիստալ հատվածը ջրով կամ միջոցի լուծույթով տարայի մեջ ընկղմելով, համաձայն էնդոսկոպ արտադրողի կողմից ներկայացված մշակման հրահանգների: Նախնական մաքրումից հետո էնդոսկոպն անջատում են սնման աբդյուրից և տեղափոխում մշակման սենք, պահպանելով հակահամաճարակային միջոցառումները:

3) Էնդոսկոպներին կից գործիքները ընկղմում են միջոցով տարայի մեջ, ապահովելով միջոցի ամբողջական շփումը դրանց հետ, մաքրում են դրանք միջոցի մակերեսի տակ գործվածքային (թանգիվե) անձեռոցիկներով, թույլ չտալով միջոցի ցայտում, այնուհետև գործիքները լվանում են ջրով:

50. Հետագա մշակումից առաջ էնդոսկոպը ենթակա է ակնադիտական զննման և հերմետիկության խախտման նկատմամբ թեստի, համաձայն արտադրողի հրահանգի: Արտաքին մակերեսի վնասումով և ներքին կառուցվածքները բացված կամ հերմետիկության խախտմամբ էնդոսկոպը ենթակա չէ հետագա օգտագործման:

51. Նախնական մաքրումից և հերմետիկության նկատմամբ թեստից հետո էնդոսկոպները ենթարկում են ախտահանման, որը կարող է լինել համակցված նախամանրէազերծման (եզրափակիչ՝ էնդոսկոպների ԲՄԱ-ից առաջ) մաքրմամբ: Էնդոսկոպներն ընկղմում են միջոցի լուծույթով տարայի մեջ, լուծույթով լցնելով խողովակները և ապահովելով լուծույթի ամբողջական շփումը էնդոսկոպի բոլոր մակերեսների հետ: Էնդոսկոպների նախամանրէազերծման (եզրափակիչ) մաքրումն իրականացնում են ախտահանման պահաժամից հետո, հետևելով սույն հրահանգի 5-րդ բաժնում ներկայացված ցուցումներին:

52. Ախտահանումից հետո, այդ թվում մաքրման հետ համակցված, էնդոսկոպները լվանում են միջոցի մնացորդներից՝ սկզբում հոսող խմելու ջրով 5 րոպե, այնուհետև՝ թորած ջրով 1 րոպե: Էնդոսկոպի խողովակները լվանում են, ներարկիչով կամ հատուկ հարմարանքով դրանց միջով ջուր բաց թողնելով: Այնուհետև էնդոսկոպները ենթարկում են մանրէազերծման կամ ԲՄԱ-ի:

53. Էնդոսկոպներին կից գործիքներն ընկղմում են վացող-ախտահանող լուծույթով տարայի մեջ, ապահովելով լուծույթի ամբողջական շփումը բոլոր մակերեսների հետ, մաքրում են դրանք լուծույթի մակերեսի տակ թանձիվե (գործվածքային) անձեռոցիկներով, թույլ չտալով լուծույթի ցայտում: Ֆունկցիոնալ խողովակներ ունեցող գործիքների խողովակները լվանում են ներարկիչով կամ այլ հարմարանքով: Ախտահանիչ պահաժամից հետո գործիքները լվանում են սկզբում հոսող խմելու ջրով 5 րոպե, այնուհետև թորած ջրով՝ 1 րոպե, որից հետո մանրէազերծում են:

54. Ոչ վարակիչ հիվանդությամբ պացիենտի համար օգտագործված էնդոսկոպը նախնական մաքրումից հետո ենթարկում են նախամանրէազերծման (կամ եզրափակիչ՝ ԲՄԱ-ից առաջ)՝ հետագա մանրէազերծումով (մանրէազերծ էնդոսկոպիական գործողությունների համար օգտագործվող էնդոսկոպների համար), կամ ԲՄԱ-ով (ոչ մանրէազերծ էնդոսկոպիական գործողությունների համար օգտագործվող էնդոսկոպների համար):

55. Կոշտ և ճկուն էնդոսկոպների նախամանրէազերծման հետ համակցված ախտահանման ռեժիմները ձեռքային եղանակով ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 13-ում:

56. Էնդոսկոպների մեքենայացված մշակումը (հայրենական և արտասահմանյան արտադրության) միջոցով թույլատրվում է իրականացնել ԵԱՏՄ տարածքում սահմանված կարգով գրանցված ցանկացած տեսակի մեքենայացված սարքավորումների մեջ (ԿՐՈՆՏ-ՈՒԴԷ և այլ), սարքերի օգտագործման հրահանգներին համապատասխան:

57. Էնդոսկոպների և դրանց կից գործիքների մաքրման որակի գնահատման համար արյան մնացորդային քանակների առկայության նկատմամբ դրվում է ազդափրամային կամ այդ նպատակի համար կանոնակարգված այլ փորձեր, համաձայն գործող նորմատիվային փաստաթղթերում ներկայացված մեթոդաբանության: Հսկման ենթակա է միաժամանակ մշակված նույնանուն արտադրատեսակների 1%-ը (սակայն առնվազն երեք արտադրատեսակ): Արյան մնացորդների հայտնաբերման ժամանակ (դրական փորձ) արտադրատեսակների ամբողջ խումբը, որից վերցրել են արտադրատեսակներ հսկման համար, ենթակա է կրկնակի մշակման, մինչև բացասական արդյունքի ստացումը:

**5. ՄԻՋՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ՆԵՐԱՌՅԱԼ ԷՆԴՈՍԿՈՊՆԵՐԻ ԵՎ
ԴՐԱՆՑ ԿԻՑ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ, ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ,
ՆԱԽԱՄԱՆՐԷԱՋԵՐԾՄԱՆ (ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՔՐՄԱՆ ԲՄԱ-ԻՑ ԱՌԱՋ) ՀԱՄԱՐ**

58. Նշված արտադրատեսակների՝ ախտահանման հետ չհամակցված նախամանրէազերծումն իրականացնում են դրանց ախտահանումից հետո՝ ցանկացած, ԵԱՏՄ տարածքում գրանցված և բժշկական կազմակերպություններում այդ նպատակի համար թույլատրված միջոցով (այդ թվում «ՖԱԳՈՍՈՒՐՖ ՆԴ» միջոցով), և այդ միջոցի մնացորդներից խմելու ջրով պարզաջրումից հետո՝ տվյալ միջոցի կիրառման հրահանգին (մեթոդական ուղեցույցին) համապատասխան: Ձեռքային եղանակով իրականացվող ախտահանման հետ չհամակցված

նախամանրէազերծման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 14-ում, մեքենայացված եղանակով ուտրաձայնի կիրառմամբ՝ աղյուսակ 15-ում:

59. Էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախամանրէազերծումը (եզրափակիչ մաքրումը՝ էնդոսկոպների ԲՄԱ-ից առաջ) իրականացնում են գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին, ինչպես նաև էնդոսկոպիական սարքավորումների արտադրողների առաջարկներին համապատասխան:

60. Նախնական մաքրումից հետո հերմետիկության համար թեստ անցած էնդոսկոպը և դրան կից գործիքները ենթարկում են նախամանրէազերծման (կամ եզրափակիչ՝ էնդոսկոպները ԲՄԱ-ից առաջ) մաքրման՝ միջոցի լուծույթների կիրառմամբ:

61. Էնդոսկոպները և դրանց կից գործիքներն ամբողջությամբ ընկղմում են միջոցով տարայի մեջ, ապահովելով լուծույթի ամբողջական շփում արտադրատեսակների մակերեսների հետ: Խողովակներից օդի հեռացման համար օգտագործում են ներարկիչ կամ հատուկ հարմարանք, որը լինում է էնդոսկոպին կից:

62. Արտադրատեսակները լվանում են նույն լուծույթում, որի մեջ իրականացրել են թրջումը: Էնդոսկոպի արտաքին մակերեսները և դրան կից գործիքները մաքրում են միջոցի մակերեսի տակ գործվածքային (թանգիվե) անձեռոցիկներով, թույլ չտալով միջոցի ցայտում: Հարմարանքների և էնդոսկոպներին կից գործիքների մաքրման ժամանակ նույնպես օգտագործում են խոզանակներ:

63. Էնդոսկոպների խողովակների մեխանիկական մաքրման համար օգտագործում են խողովակների տրամագծին և երկարությանը համապատասխանող հատուկ խոզանակներ: Խողովակների մեխանիկական մաքրումն իրականացնում են համաձայն էնդոսկոպ արտադրողի հրահանգի, էնդոսկոպի խողովակների և դրան կից գործիքների միջոցով լվացման համար օգտագործում են ներարկիչներ կամ այլ հարմարանքներ: Խոզանակները յուրաքանչյուր օգտագործումից հետո ենթակա են մշակման, ինչպես էնդոսկոպներին կից գործիքները:

64. Մեքենայացված մաքրումից հետո էնդոսկոպների և դրանց կից գործիքների լվացումն իրականացնում են սկզբում հոսող խմելու ջրով 5 րոպե, այնուհետև թորած ջրով՝ 1 րոպե:

65. Լվացված էնդոսկոպը և դրան կից գործիքները տեղափոխում են չոր սալանի վրա՝ արտաքին մակերեսներից խոնավության հեռացման համար: Խողովակներից խոնավությունը հեռացնում են ներարկիչով կամ այլ հարմարանքով:

66. Բժշկական նշանակության արտադրատեսակների ախտահանման հետ չհամակցված նախամանրէազերծման ռեժիմները ձեռքային եղանակով ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 14-ում, մեքենայացված եղանակով («ՄԵԴԷԼ» և «Ուլտրաէստ» տեսակի ուլտրաձայնային սարքավորումների օգտագործմամբ)՝ աղյուսակ 15-ում:

67. Կոշտ և ճկուն էնդոսկոպների նախամանրէազերծման (եզրափակիչ՝ ԲՄԱ-ից առաջ) ռեժիմները ձեռքային եղանակով ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 16-ում:

68. Արտադրատեսակների նախամանրէազերծման որակը գնահատում են արյան մնացորդային քանակների առկայության նկատմամբ ազդպիրամային կամ այդ նպատակի համար կանոնակարգված այլ փորձով՝ (տես սույն հրահանգի 57-րդ կետը):

Աղյուսակ 4.

Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցով

Ախտահանման օբյեկտներ	Աշխատանքային	Ազդեցության ժամանակը (էքսպոզիցիա) տարբեր վարակների ժամանակ (րոպեներով)	Ախտահանման եղանակ
-------------------------	--------------	--	----------------------

		Մանրէային վարակներ (բացառությամբ տուբերկուլոզի)	Թաղանթավոր վիրուսներ (արտաընդերային հեպատիտներ, ՄԻԱՎ-վարակ, գրիպ, հերպես և այլն)	Ոչ թաղանթավոր վիրուսներ (պոլիվիրուս, ադենովիրուս և այլն)	Կանդիդոզներ	Դերմատոմիկոզներ	Տուբերկուլոզ (Mycobacterium terrae)	
Սենքերում մակերեսներ (հատակ, պատեր, կահավորանքի պարագաներ, կոշտ գույք, սարքեր, սարքավորումներ և այլն)	0,1 0,2 0,25 0,4 0,5	15 5 - - -	- - 15 5 -	- - 30 - 5	15 - 5 - -	- - 15 - -	- - 30 15 -	Շփում, ռռոզում
Սանիտարա- տեխնիկական սարքավորումներ	0,1 0,2 0,25 0,4 0,5 1,0	30 15 - - - -	30 - 15 5 - -	60 - 30 - 5 -	30 - 15 - - -	- - 15 - - -	- - - 30 - 15	Շփում, ռռոզում
Պացիենտի խնամքի պարագաներ	0,1 0,2 0,25 0,4 0,5 1,5	30 15 - - 5 -	30 - 15 5 - -	60 - 30 - 5 -	30 - 15 - - -	- - 30 - 15 5	- - 30 15 - -	Շփում կամ ընկղմում
Սպիտակեղեն, արտադրություննե րով չաղտոտված	0,1 0,2 0,25	15 5 -	15 - 5	30 - 15	30 - 15	- - 30	- - 30	Թրջում

	0,4	-	-	-	-	-	15	
	0,5	-	-	5	-	15	-	
	1,5	-	-	-	-	5	-	
Սպիտակեղեն, արտադրություններ րով աղտոտված	0,1	30	-	-	-	-	-	Թրջում
	0,2	15	-	-	-	-	-	
	0,25	-	-	-	30	-	-	
	0,5	-	60	90	15	-	-	
	0,75	-	-	-	-	-	60	
	1,0	-	30	60	-	-	45	
	1,5	-	-	-	-	30	30	
	2,0	-	-	-	-	15	-	
Սպասք՝ առանց սննդի մնացորդների	0,1	15	15	30	15	-	-	Ընկղմում
	0,25	-	5	15	-	-	30	
	0,4	-	-	-	-	-	15	
	0,5	-	-	5	-	-	-	
Սպասք՝ սննդի մնացորդներով	0,1	-	-	-	30	-	-	Ընկղմում
	0,2	15	-	-	-	-	-	
	0,25	-	15	30	15	-	-	
	0,5	-	5	15	-	-	60	
	1,0	-	-	-	-	-	30	
	1,5	-	-	-	-	-	-	
Անոթներ՝ լաբորատոր, դեղատնային, սպասքի լվացման պարագաներ	0,1	-	-	-	30	-	-	Ընկղմում
	0,2	15	-	-	-	-	-	
	0,25	-	15	30	15	-	60	
	0,5	-	5	15	-	-	30	
	1,0	-	-	-	-	-	-	
Խաղալիք, մարզագույք, անհատական հիգիենայի պարագաներ	0,1	15	-	-	15	-	-	Ընկղմում
	0,2	5	-	-	-	-	-	
	0,25	-	5	15	5	15	30	
	0,4	-	-	-	-	-	15	
	0,5	-	-	5	-	5	-	

(պլաստմասե, ռետինից, մետաղյա)								
Մաքրման պարագաներ, նյութեր	0,1	30	-	-	60	-	-	Ընկղմում , թրջում
	0,2	15	-	-	-	-	-	
	0,25	-	15	-	30	-	-	
	0,5	-	-	15	15	-	-	
	0,75	-	-	-	-	-	60	
	1,0	-	-	-	-	-	45	
	1,5	-	-	-	-	30	30	
	2,0	-	-	-	-	15	-	
Գորգե հատակի ծածկույթ, պաստառապատմ ան գործվածք, փափուկ գույք	0,1	30	-	-	-	-	-	Շփում խոզանա կով կամ ռոռոզում
	0,25	15	-	-	-	-	-	
	0,5	-	-	-	-	-	30	
	1,0	-	-	-	-	-	15	
Ռետինե գորգեր	0,1	-	-	-	60	-	-	Շփում կամ ընկղմում
	0,25	-	-	-	30	30	-	
	0,5	-	-	-	15	15	-	
	1,5	-	-	-	-	5	-	
Կուվեզներ, նարկոզա- շնչառական սարքերի հարմարանքներ (այդ թվում շնչառական կոնտուրներ, պարկեր), անեսթեզիոլոգիա	0,1	15	-	-	15	-	-	Շփում, ընկղմում
	0,2	5	-	-	-	-	-	
	0,25	-	15	30	5	15	30	
	0,75	-	-	-	-	5	-	
	0,4	-	5	-	-	-	15	
	0,5	-	-	5	-	-	-	

կան սարքավորումներ								
Կոշիկներ՝ կաշվե, գործվածքից, դերմատինից	,1 ,25 ,5 1,0	- - -	- - -	- - -	0 0 5 5	0 0 15	- - -	Շփում
Կոշիկներ՝ Պլաստիկե և ռետինե	,1 ,25 0,5	- - -	- - -	- - -	0 0 15	0 30	- - -	Ընկղմում
Ախտահանման օբյեկտներ	Աշխատանքային տնօրինություն	Մանրէային վարակներ (բացառությամբ տուբերկուլոզի)	Թաղանթավոր վիրուսներ (արտաբնորոշային հեպատիտներ, ՄԻԱՎ-վարակ, օհա հեռախուս)	Ոչ թաղանթավոր վիրուսներ (արուստիտ, առենյուկ)	Կանդիդոզներ	Դերմատոմիկոզներ	Տուբերկուլոզ (Mycobacterium terrae)	Ախտահանման եղանակ
Ազդեցության ժամանակը (էքսպոզիցիա) տարբեր վարակների ժամանակ (րոպեներով)								

Աղյուսակ 5.

Օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով հիմնական մաքրումների ժամանակ

Բժշկական կազմակերպության ուղղվածությունը	Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի), %	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
--	---	--------------------------	-------------------

Սոմատիկ բաժանմունքներ (բացառությամբ գործողությունների սենյակի)	0,1 0,2	15 5	Շփում, ոռոգում
Վիրաբուժական բաժանմունք, գործողությունների սենյակ, ատամնաբուժական, մանկաբարձական և գինեկոլոգիական բաժանմունքներ և սենյակներ, լաբորատորիաներ, վիրահատարան, վիրակապարան	0,25 0,5	30 5	Շփում, ոռոգում
Հակատուբերկուլոզային ԲԿ	0,25 0,4	30 15	Շփում, ոռոգում
Ինֆեկցիոն ԲԿ *	-	-	Շփում, ոռոգում
Մաշկա- վեներաբանական ԲԿ	0,25	15	Շփում, ոռոգում
Մանկական հաստատություններ, Սոցիալական ծառայություն մատուցող կազմակերպություններ, սպասարկման ոլորտի օբյեկտներ	0,1 0,2	15 5	Շփում, ոռոգում
Քրեակատարողական հիմնարկներ	0,25 0,4	30 15	Շփում, ոռոգում

Նշում. * ռեժիմ համապատասխան վարակի ժամանակ

Աղյուսակ 6.

Օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով հատուկ
վտանգավոր վարակների ժամանակ (ժանտախտ, խոլերա, տուլյարեմիա,
լեգիոնելոզ)

Ախտահանման օբյեկտներ	Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի), %	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Սենքերում մակերեսներ (հատակ, պատեր, կոշտ գույք, սարքեր, սարքավորումներ և այլն), սանիտարական տրանսպորտ	0,25 0,5	60 30	Շփում, ոռոգում
Սանիտարա-տեխնիկական սարքավորումներ	0,25 0,5	60 30	Շփում, ոռոգում
Պացիենտի խնամքի պարագաներ, խաղալիք	0,25 0,5	60 30	Շփում, ոռոգում
Սպիտակեղեն, արտադրություններով աղտոտված	0,5 1,0	120 60	Թրջում
Սպասք՝ առանց սննդի մնացորդների	0,25 0,5	60 30	Ընկղմում
Սպասք՝ սննդի մնացորդներով, Լաբորատոր անոթներ	0,5 1,0	120 60	Ընկղմում
Մաքրման պարագաներ, նյութեր	0,5	120	Ընկղմում, թրջում

		1,0	60	
Բժշկական թափոններ	Մեկանգամյա օգտագործման բժշկական նշանակության արտադրատես ակներ	0,25 0,5	60 30	Ընկղմում
	Վիրակապակա ն նյութեր, բամբակե խծուծներ, անձեռոցիկներ	0,5 1,0	120 60	Թրջում

Աղյուսակ 7.

Օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով բորբոսասնկերով
ախտահարումների կանխարգելման համար

Ախտահանման օբյեկտ	Աշխատանքայի ն լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի) , %	Ախտահանմա ն ժամանակ, րոպե	Ախտահանմա ն եղանակ
Սենքերում մակերեսներ (հատակ, պատեր, կոշտ գույք), Կահավորանք ի պարագաներ	0,25	15	Կրկնակի շփում կամ ռոռոգում 15 րոպե ընդմիջումով
Սպիտակեղեն՝ աղտոտված	1,5 2,0	30 15	Թրջում

օրգանական նյութերով			
Մաքրման պարագաներ, նյութեր	1,5 2,0	30 15	Թրջում, ընկղմում կամ շփում
Ռետինե և պոլիպրոպիլենային գորգեր	0,25 0,5 1,5	30 15 5	Ընկղմում կամ շփում

Աղյուսակ 8.

Բժշկական և սննդային թափոնների ախտահանման ռեժիմներ միջոցի
լուծույթներով

Մշակվող արտադրատեսակներ		Մշակման ռեժիմներ		
		Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի), %	Ախտահանման ժամանակ, րոպե	Մշակման եղանակ
Բժշկական թափոններ	Բամբակյա կամ թանգիվե խծուծներ, թանգիվ, բինտ, անձնակազմի հագուստ և այլն	1,5 2,0	60 30	Թրջում
	Մեկանգամյա օգտագործման բժշկական նշանակության արտադրատեսակներ	0,25** 0,5** 1,5*** 2,0***	60** 30** 60*** 30***	Ընկղմում
	Չինֆեկցված բժշկական թափոնների	0,2	5	Շփում կամ ռոռոգում

	հավաքման և հեռացման բեռնարկներ			
	Ինֆեկցված բժշկական թափոնների հավաքման և հեռացման բեռնարկներ	0,5 0,75 1,5 2,0	120 90 60 30	Շփում կամ ոռոգում
Մենդի մնացորդներ, լվացման ջրեր (ներառյալ էնդոսկոպիական լվացման ջրերը)		0,5 0,25	15 30	Խառնում են աշխատանքային լուծույթի հետ 1:1 հարաբերությամբ, խառնում են
Հեղուկ թափոններ, արյուն, շիճուկ, հիվանդի արտադրություններ (խորխ*, մեզ, արտաթորանք, փսխման զանգված և այլն)		0,25 3,0*	30 120*	Խառնում են աշխատանքային լուծույթի հետ 1 մաս թափոն 2 մաս լուծույթ հարաբերությամբ
Հիվանդի արտադրությունների անոթներ, այն մակերեսները, որոնց վրայից վերցրել են կենսաբանական նյութը պարզել		0,5 1,0 2,0	90 60 30	Շփում (մակերեսներ), ընկղմում (անոթներ)
Պատվաստանյութեր, ներառյալ ԲՅԺ, անհատական փաթեթավորման խախտման կամ պիտանելիության ժամկետի սպառման ժամանակ		3,0	120	Ընկղմում

Ախտաբանանատոմիական թափոններ, օրգանական վիրահատական թափոններ (օրգաններ, հյուսվածքներ և այլն)	3,0	120	Ընկղմում
--	-----	-----	----------

Նշում. * տուբերկուլոզի ռեժիմներին համապատասխան,
 ** մանրէային և վիրուսային (բացառությամբ պոլիոմիելիտի վիրուսը)
 վարակների ռեժիմներին համապատասխան,
 *** մանրէային, վիրուսային (ներառյալ պոլիոմիելիտի վիրուսը) և
 տուբերկուլոզային վարակների ռեժիմներին համապատասխան:

Աղյուսակ 9.

Օդի, օդափոխության և օդորակման համակարգերի ախտահանման
 ռեժիմներ միջոցի լուծույթներով մանրէային
 (ներառյալ լեգիոնելոզը, տուբերկուլոզը) և վիրուսային վարակների ժամանակ

Ախտահանման օբյեկտներ	Ախտահանման ռեժիմներ. խտություն (%), ժամանակ (րոպե) տարբեր վարակների ժամանակ						Ախտահանման եղանակ
	մանրէներ		տուբերկուլոզ		վիրուսներ		
	Խտ.	Ժամա նակ	Խտ.	Ժամ անա կ	Խտ.	Ժամա նակ	
Կենտրոնական և կենցաղային օդորակիչների և ընդհանուր փոխանակային օդափոխության սեկցիաներ, օդընդունիչներ և օդաբաշխիչներ	0,25 0,5	60 30	0,5 1,0	60 30	0,5 1,0	60 30	Շփում կամ ռոզոզում

Օդային ֆիլտրեր*	0,25 0,5	120 60	0,75 1,0	90 60	0,75 1,0	90 60	Ընկղմում
Ռադիատորի վանդակաճաղեր, գլխադիրներ, կոնդենսատի կուտակիչներ	0,25 0,5	60 30	0,5 1,0	60 30	0,5 1,0	60 30	Շփում
Օդատարներ	0,25 0,5	60 30	0,5 1,0	60 30	0,5 1,0	60 30	Ոռոգում
Օդ	0,25 0,5	60 30	0,5 1,0	60 30	0,5 1,0	60 30	Ֆողացրում

Աղյուսակ 10.

Բժշկական նշանակության արտադրատեսակների ախտահանման ռեժիմներ
միջոցի աշխատանքային լուծույթներով

Մշակվող օբյեկտներ	Տուբերկուլոզ		Մանրէներ, վիրուսներ (այդ թվում արտաընդերային հեպատիտների վիրուսներ), սնկեր (այդ թվում կանդիդա, տրիխոֆիտոն)		Մշակման եղանակ
	Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի), %	Պահման ժամանակ, րոպե	Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի), %	Պահման ժամանակ, րոպե	
Բժշկական նշանակության արտադրատեսակներ , այդ թվում վիրաբուժական, ատամնաբուժական	0,25 0,5	30 15	0,25	15	

գործիքներ և նյութեր, էնդոսկոպներին կից գործիքներ մետաղից, պլաստմասե, ապակյա, հայելիներ ամալգամով					Ընկղմում
Ռետինե					
արտադրատեսակներ	0,25	45	0,25	30	
, ատամնաբուժական բորեր	0,5	20	0,5	15	
Կոշտ և ճկուն	0,25	30	0,25	15	
էնդոսկոպներ	0,5	15	0,5	10	

Աղյուսակ 11.

Բժշկական նշանակության արտադրատեսակների (ներառյալ վիրաբուժական, ատամնաբուժական գործիքները, այդ թվում պտտվող, ատամնաբուժական նյութեր, էնդոսկոպներին կից գործիքներ) նախամանրէագերծումով համակցված ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով ձեռքային եղանակով

Մշակման փուլեր	Մշակման եղանակներ		
	Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի), %	Աշխատանքային լուծույթի ջերմաստիճան, °C	Ազդեցության ժամանակ/ պահաժամ, րոպե
Արտադրատեսակների թրջում աշխատանքային լուծույթի մեջ դրանց ամբողջական ընկղմմամբ և խողովակներն ու		Առնվազն 18	

խոռոչները լուծույթով լցնելով.			
- պարզ ձև ունեցող արտադրատեսակների համար ¹	0,5		20
- փականային մասեր, խողովակներ ու խոռոչներ ունեցող արտադրատեսակների, ատամնաբուժական նյութերի, էնդոսկոպներին կից գործիքների, ամալգամով հայելիների համար ¹	0,5		30
-ռետինե արտադրատեսակների, ատամնաբուժական բորերի համար ¹	0,5 0,5		15 45
Պարզաջրում հոսող խմելու ջրով (խողովակները՝ ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով)	Չի նորմավորվում		3,0
Պարզաջրում թորած ջրով (խողովակները՝ ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով)	Չի նորմավորվում		1,0

Նշում. ¹արտադրատեսակների թրջման փուլում աշխատանքային լուծույթում ապահովվում է դրանց ախտահանումը մանրէային (ներառյալ տուբերկուլոզը), վիրուսային և սնկային (կանդիդոզներ և դերմատոֆիտիաներ) վարակների հարուցիչների նկատմամբ,

¹արտադրատեսակների թրջման փուլում աշխատանքային լուծույթում ապահովվում է դրանց ախտահանումը մանրէային (ներառյալ տուբերկուլոզը), վիրուսային (բացառությամբ պոլիոմիելիտի) և սնկային (կանդիդոզներ և դերմատոֆիտիաներ) վարակների հարուցիչների նկատմամբ:

Աղյուսակ 12.

Բժշկական նշանակության արտադրատեսակների (ներառյալ վիրաբուժական, ատամնաբուժական գործիքները, այդ թվում պտտվող, ատամնաբուժական նյութերը, էնդոսկոպներին կից գործիքները) նախամանրէազերծման հետ համակցված ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթով մեքենայացված եղանակով (ոլտրաձայնի օգտագործմամբ «УЗО» - «КРИСТАЛЛ-5», УЗО5-01-«МЕДЭЛ», «УЛЬТРАЭСТ», «СЕРБГА» և այլ տեսակի սարքերում)

Մշակման փուլեր	Մշակման ռեժիմներ		
	Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի), %	Աշխատանքային լուծույթի ջերմաստիճան, °C	Ազդեցության/ մշակման ժամանակ, րոպե
Թրջում* աշխատանքային լուծույթի մեջ արտադրատեսակների ամբողջական ընկղմմամբ և խոռոչներն ու խողովակները լուծույթով լցնելով	0,5	Առնվազն 18	15

Պարզաջրում հոսող խմելու ջրով սարքավորումից դուրս	Չի նորմավորվում	3
Պարզաջրում թորած ջրով սարքավորումից դուրս		1

Նշում. * միջոցի լուծույթներով արտադրատեսակների ուլտրաձայնային մշակման այս փուլում ապահովվում է դրանց ախտահանումը մանրէային (ներառյալ տուբերկուլոզը), վիրուսային և սնկային (կանդիդոզներ և դերմատոֆիտիաներ) վարակների հարուցիչների նկատմամբ:

Աղյուսակ 13.

Կոշտ և ճկուն էնդոսկոպների նախամանրէազերծման (եզրափակիչ մաքրման) հետ համակցված ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթով ձեռքային եղանակով

Մշակման փուլեր	Մշակման եղանակներ		
	Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի), %	Աշխատանքային լուծույթի ջերմաստիճան, °C	Ազդեցության ժամանակ/ պահաժամ, րոպե
Արտադրատեսակների թրջումը* (ամբողջությամբ չընկղմվող էնդոսկոպների համար ընկղմման թույլատրվող աշխատանքային մասերի) միջոցի աշխատանքային լուծույթի մեջ դրանց ամբողջական ընկղմմամբ և խողովակներն ու խոռոչները լուծույթով լցնելով	0,25 0,5	Առնվազն 18	15 10
Յուրաքանչյուր էնդոսկոպի վաճուռ նույն	Համապատասխանում է թրջման փուլում	Նույնը	3.0

լուծույթում, որում իրականացվել է թրջումը.	օգտագործված լուծույթի խտությանը		1.0
ՃԿՈՒՆ ԷՆԴՈՍԿՈՊՆԵՐ.			
• գործիքային խողովակը մաքրում են գործիքային խողովակը մաքրելու խողանակով,			
• ներքին խողովակները լվանում են ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով			
• արտաքին մակերեսը լվանում են թանգիվե (գործվածքային) անձեռոցիկով:			
ԿՈՇՏ ԷՆԴՈՍԿՈՊՆԵՐ			
• յուրաքանչյուր մասը լվանում են խողանակով կամ թանգիվե (գործվածքային) անձեռոցիկով	Համապատասխանում է թրջման փուլում օգտագործված լուծույթի խտությանը		2.0
• խողովակները լվանում են ներարկիչով			2.0
Պարզաջրում հոսող խմելու ջրով (խողովակները՝ ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով)	Չի նորմավորվում		5,0
Պարզաջրում թորած ջրով (խողովակները՝ ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով)	Չի նորմավորվում		1,0

Նշում. * աշխատանքային լուծույթի մեջ արտադրատեսակների թրջման փուլում
ապահովվում է դրանց ախտահանում մանրէային, վիրուսային, սնկային
(կանդիդոզներ, դերմատոֆիտիաներ) վարակների հարուցիչների
նկատմամբ:

Աղյուսակ 14.

Բժշկական նշանակության արտադրատեսակների (այդ թվում վիրաբուժական և ատամնաբուժական գործիքների, ատամնաբուժական նյութերի և էնդոսկոպներին կից գործիքների) նախամանրէազերծման ռեժիմներ միջոցի լուծույթներով ձեռքային եղանակով

Փուլեր նախամանրէազերծում իրականացնելու ժամանակ	Մաքրման ռեժիմներ		
	Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի), %	Աշխատանքայի ն լուծույթի ջերմաստիճան, °C	Ազդեցության ժամանակ/ պահաժամ, րոպե
Արտադրատեսակների թրջում միջոցի աշխատանքային լուծույթում դրանց ամբողջական ընկղմմամբ և խողովակներն ու խոռոչները լուծույթով լցնելով.	0.25	Առնվազն 18	
- փականային մասեր, խողովակներ և խոռոչներ չունեցող			5
- փականային մասեր, խողովակներ և խոռոչներ ունեցող, էնդոսկոպներին կից գործիքներ, ատամնաբուժական գործիքներ և նյութեր, ամալգամով հայելիներ			10
Յուրաքանչյուր արտադրատեսակի լվացում նույն լուծույթում, որտեղ իրականացվել է թրջումը, խոզանակով, բամբակ-թանգիվե խծուծով կամ գործվածքային (թանգիվե) անձեռոցիկներով, արտադրատեսակների խողովակները՝ ներարկիչով. • փականային մասեր, խողովակներ կամ խոռոչներ չունեցող արտադրատեսակներ • փականային մասեր, խողովակներ կամ խոռոչներ ունեցող արտադրատեսակներ	Նույնը	Նույնը	1.0 3.0
Պարզաջրում հոսող խմելու ջրով (խողովակները՝ ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով)	Չի նորմավորվում		3.0

Պարզաջրում թորած ջրով (խողովակները՝ ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով)	Չի նորմավորվում	0.5
--	-----------------	-----

Աղյուսակ 15.

Բժշկական նշանակության արտատադրատեսակների (այդ թվում
վիրաբուժական և ատամնաբուժական գործիքները, ատամնաբուժական նյութերը)
նախամանրէագերծման ռեժիմներ միջոցի լուծույթներով մեքենայացված եղանակով
(«МЕДЭЛ» և «УЛБТРАЭСТ» տեսակի ուլտրաձայնային սարքավորումների
օգտագործմամբ)

Մաքրման իրականացման փուլեր	Մաքրման ռեժիմներ		
	Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի), %	Ջերմաստիճան, °C	Ազդեցության ժամանակ/ պահաժամ, րոպե
Թրջում ուլտրաձայնային սարքերի մեջ՝ լուծույթի մեջ արտատադրատեսակների ամբողջական ընկղմմամբ և խողովակներն ու խոռոչները լուծույթով լցնելով.	0.1	Առնվազն 18	
- փականային մասեր, խողովակներ և խոռոչներ չունեցող			5
- փականային մասեր, խողովակներ և խոռոչներ ունեցող, էնդոսկոպներին կից գործիքներ, ատամնաբուժական գործիքներ և նյութեր, ամալգամով հայելիներ			10
Յուրաքանչյուր արտատադրատեսակի վացում նույն լուծույթում, որտեղ իրականացվել է թրջումը, խոզանակով, բամբակ-թանգիվե խճուճով, արտատադրատեսակների խողովակները՝ ներարկիչով.		Չի կարգավորվում	

• փականային մասեր, խողովակներ կամ խողոջներ չունեցող արտադրատեսակներ			1.0
• փականային մասեր, խողովակներ կամ խողոջներ ունեցող արտադրատեսակներ (մկրատ, կորնցանգ, սեղմակ, ատամնաբուժական ներարկիչներ), ամալգամով հայելիներ	0.1		3.0
Պարզաջրում հոսող խմելու ջրով (խողովակները՝ ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով)	Չի նորմավորվում		3.0
Պարզաջրում թորած ջրով (խողովակները՝ ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով)	Չի նորմավորվում		0.5

Աղյուսակ 16.

Կոշտ և ճկուն էնդոսկոպների նախամանրէազերծման (եզրափակիչ մաքրման՝ ԲՄԱ-ից առաջ) ռեժիմներ միջոցի լուծույթներով ձեռքային եղանակով

Մշակման փուլեր	Մշակման եղանակներ		
	Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի), %	Աշխատանքային լուծույթի ջերմաստիճան, °C	Ազդեցության ժամանակ/ պահաժամ, րոպե
Արտադրատեսակների թրջում (ամբողջությամբ չընկղմվող էնդոսկոպների համար ընկղմման թույլատրվող աշխատանքային մասերի) միջոցի աշխատանքային լուծույթի մեջ դրանց ամբողջական ընկղմմամբ և խողովակներն ու խողոջները լուծույթով լցնելով	0,25 0,5	Առնվազն 18	15 5
Յուրաքանչյուր էնդոսկոպի լվացում նույն լուծույթում, որում իրականացվել է թրջումը.	0,5	Նույնը	2,0
ՃԿՈՒՆ ԷՆԴՈՍԿՈՊՆԵՐ.			

• գործիքային խողովակը մաքրում են գործիքային խողովակը մաքրելու խողանակով,			
• ներքին խողովակները լվանում են ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով			3,0
• արտաքին մակերեսը լվանում են թանգիվե (գործվածքային) անձեռոցիկով:			1,0
ԿՈՇՏ ԷՆԴՈՍԿՈՂՆԵՐ			
• յուրաքանչյուր մասը լվանում են խողանակով կամ թանգիվե (գործվածքային) անձեռոցիկով			2,0
• խողովակները լվանում են ներարկիչով			2,0
Պարզաջրում հոսող խմելու ջրով (խողովակները՝ ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով)	Չի նորմավորվում		5,0
Պարզաջրում թորած ջրով (խողովակները՝ ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով)	Չի նորմավորվում		1,0

6. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

69. Միջոցի հետ բոլոր աշխատանքներն իրականացվում են ռետինե ձեռնոցով:
70. Աշխատելիս չի թույլատրվում խմել, սնվել և ծխել:
71. Խուսափել մաշկի վրա և աչքերի մեջ լցվելուց:
72. Միջոցը պահվում է դեղերից առանձին, երեխաների համար անհասանելի տեղերում:
73. Չօգտագործել պիտանելիության ժամկետն սպառվելուց հետո:
74. Մակերեսները միջոցի 0,5%-ը չզերազանցող լուծույթով մշակելուց հետո ջրով միջոցի մնացորդների հետագա հեռացման անհրաժեշտություն չկա:
75. Սենքերում մակերեսների մշակումը շփման եղանակով իրականացվում է մարդկանց ներկայությամբ և առանց շնչառական օրգանների անհատական պաշտպանության միջոցների:

76. Ոռոգման եղանակով մակերեսների մշակման ժամանակ անձնակազմը օգտագործում է ձեռքերի (ռետինե ձեռնոց), շնչառական օրգանների (РПГ-67 կամ РУ-60М տեսակի «В» մակնիշի պատրոնով ունիվերսալ շնչադիմակներ), աչքերի (հերմետիկ ակնոց) անհատական պաշտպանության միջոցներ: Մշակումն իրականացվում է պացիենտների բացակայության պայմաններում: Մշակումից հետո սենքում իրականացվում է խոնավ մաքրում և օդափոխություն 15 րոպե:

77. Միջոցի պատահական արտահոսքի ժամանակ այն ադսորբում են հեղուկ պահող նյութով (ավազ, տաշեղ), հավաքում և օգտահանում են, կամ թափված միջոցը նոսրացնում մեծ քանակությամբ ջրով:

78. Չնոսրացված միջոցը չլցնել կեղտաջրերի (մակերեսային կամ ստորգետնյա) և կոյուղու մեջ:

7. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

79. Միջոցը մաշկի վրա լցվելու ժամանակ այն լվանալ մեծ քանակությամբ ջրով:

80. Միջոցն աչքերի մեջ լցվելու ժամանակ լվանալ հոսող ջրով 10-15 րոպե, այնուհետև կաթացնել 1-2 կաթիլ 30%-ոց նատրիումի սուլֆացիլի լուծույթ: Անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի:

81. Միջոցի պատահական կոլ տալու ժամանակ խմել մի քանի բաժակ ջուր ակտիվացված ածուխի 10-20 մանրացված հաբերով: Փսխում չառաջացնել: Անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի:

8. ՊԱՀՄԱՆ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆ, ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

82. Միջոցը պահվում է պլյուս 5°C-ից մինչև պլյուս 40°C ջերմաստիճանում: Պահում են դեղերից առանձին, երեխաների համար անհասանելի տեղերում:

83. Միջոցը կարելի է տեղափոխել տրանսպորտի ցանկացած տեսակով՝ յուրաքանչյուր տեսակի տրանսպորտի համար գործող և միջոցի ու տարայի

անվնասությունը երաշխավորող բեռների տեղափոխման կանոններին համապատասխան:

9. ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱ-ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԱՆԱԼԻՏԻԿ ՄԵԹՈԴՆԵՐ

84. Միջոցը հսկվում է որակի հետևյալ ցուցանիշներով (սույն հրահանգի աղյուսակ 17):

Աղյուսակ 17.

Միջոցի որակի ցուցանիշներ

Ցուցանիշ	Նորմա
Արտաքին տեսք	Անգույնից մինչև բաց դեղին գույնի յուրահատուկ հոտով թափանցիկ հեղուկ
Խտությունը 20°C ժամանակ, գ/սմ ³	1,030- 1,038 1,047 – 1,057
Միջոցի pH	11,8-13,2 8,8 – 9,4
Դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդի (ՉԱՄ) զանգվածային բաժին, %	2,5 ± 0,25
N-(3-ամինոպրոպիլ)- N -դոդեցիլպրոպան-1,3-դիամինի զանգվածային բաժին, %	5,1 ±0,51

85. Արտաքին տեսքը որոշում են ակնադիտորեն: Դրա համար անգույն ապակուց, 30-32 մմ ներքին տրամագծով փորձանոթի մեջ կիսով չափ լցնում են միջոց և դիտում անցնող կամ արտացոլվող լույսի տակ: Հոտը գնահատում են օրգանոլեպտիկ եղանակով:

86. Խտության որոշումը 20°C-ում իրականացնում են ԳՕՍՏ 18995.1-ին համապատասխան:

87. Ջրածնային իոնների խտության ցուցանիշը (pH) որոշում են պոտենցիոմետրիկ մեթոդով ըստ ԳՕՍՏ P 50550-ի:

88. Դիֆեցիլդիմեթիլամոնիումի քլորիդի (ՉԱՄ) զանգվածային բաժնի որոշում:

1) Սարքավորումներ, ռեակտիվներ և լուծույթներ.

ա. կշեռք լաբորատոր ընդհանուր նշանակության 2-րդ դասի ճշտության, 200 գ կշռման բ. առավելագույն սահմանով, ԳՕՍՏ 24104-88,

գ. բյուրետ 1-]-2-25-0,1 ԳՕՍՏ 29251-91,

դ. Կոնաձև կոլբա KH-1-50- ԳՕՍՏ 25336-82 հղկված խցանով,

ե. կաթոցիկներ 4(5)-1-1, 2-1-5 ԳՕՍՏ 20292-74,

զ. գլաններ 1-25, 1-50, 1-100 ԳՕՍՏ 1770-74,

է. չափիչ կոլբաներ 2-100-2 ԳՕՍՏ 1770-74,

ը. նատրիումի լաուրիլսուլֆատ (դոդեցիլսուլֆատ) по ТУ 6-09-64-75,

թ. ցետիլաիրիդինիումի քլորիդ 1-ջրային, հիմնական նյութի առնվազն 99,0% պարունակությամբ "Մերկ" (Գերմանիա) ընկերության արտադրության կամ կամարժեք որակավորման ռեակտիվ,

ժ. ինդիկատոր էոզին-մեթիլենային կապույտ (ըստ Մայ-Գրյունվալդի), Կ. մակնիշի, ТУ МЗ 34-51,

ի. քլորոֆորմ ԳՕՍՏ 20015-88,

լ. ծծմբաթթվային նատրիում, x.ч. (քիմիապես մաքուր) կամ Կ.Ժ.Ա. (մաքուր՝ անալիզի համար) մակնիշի, ԳՕՍՏ 4166-76,

խ. ածխաթթվային նատրիում, x.ч. կամ Կ.Ժ.Ա., ԳՕՍՏ 83-79,

ծ. կալիումի քլորիդ, x.ч. կամ Կ.Ժ.Ա., ԳՕՍՏ 4234-77,

կ. թորած ջուր ԳՕՍՏ 6709-72:

2) Հետազոտության իրականացում:

ա. Նատրիումի լաուրիլսուլֆատի 0,005 ռ. ջրային լուծույթի պատրաստում: 0.150 գ նատրիումի լաուրիլսուլֆատը լուծում են թորած ջրում 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ, թորած ջրով ծավալը հասցնելով մինչև նիշը:

բ. Չոր ինդիկատորային խառնուրդի պատրաստում: էոզին մեթիլենային կապույտ ինդիկատորը 1:100 հարաբերությամբ խառնում են կալիումի քլորիդի հետ և

մանրակրկիտ տրորում ճենապակյա հավանգի մեջ: Չոր ինդիկատորային խառնուրդը պահում են հղկված կափարիչով բյուքսի մեջ մեկ տարի տևողությամբ:

գ. Ցետիլպիրիդինիումի քլորիդի 0.005 ռ. ջրային լուծույթի պատրաստում: 0.179 գ ցետիլպիրիդինիումի քլորիդը լուծում են թորած ջրում 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ, թորած ջրով ծավալը հասցնելով մինչև նիշը:

դ. Կարբոնատա-սուլֆատային բուֆերային լուծույթի պատրաստում: pH-ը 11 կարբոնատա-սուլֆատային բուֆերային լուծույթ պատրաստում են 100 գ ծծմբաթթվային նատրիումը և 10 գ ածխաթթվային նատրիումը լուծելով թորած ջրում, 1 դմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ, ծավալը թորած ջրով հասցնելով մինչև նիշը:

ե. Նատրիումի լաուրիլսուլֆատի լուծույթի շտկման գործակցի որոշումը: Պատրաստված նատրիումի լաուրիլսուլֆատի լուծույթի շտկման գործակիցը որոշում են ցետիլպիրիդինիումի քլորիդի 0,005 ռ. լուծույթը նատրիումի լաուրիլսուլֆատի լուծույթով երկֆազ տիտրմամբ: 50 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ 10 սմ³ ցետիլպիրիդինիումի քլորիդի լուծույթին ավելացնում են 10 սմ³ քլորոֆորմ, ներմուծում 30-50 մգ չոր ինդիկատորային խառնուրդ և լցնում 5 սմ³ բուֆերային լուծույթ: Կոլբան փակում են խցանով և թափահարում լուծույթը: Ցետիլպիրիդինիումի լուծույթը տիտրում են նատրիումի լաուրիլսուլֆատի լուծույթով: Տիտրանտի հերթական մասնաբաժինն ավելացնելուց հետո կոլբայի լուծույթը թափահարում են: Տիտրման վերջում քլորոֆորմային շերտի վարդագույն գունավորումը փոխվում է կապույտի:

Նատրիումի լաուրիլսուլֆատի K շտկման գործակիցը հաշվում են հետևյալ բանաձևով.

$$K = \frac{V_{\text{գա}}}{V_{\text{լս}}}$$

որտեղ $V_{\text{գա}}$ - ցետիլպիրիդինիումի քլորիդի 0,005 ռ. լուծույթի ծավալն է, սմ³,

$V_{\text{լս}}$ - տիտրման համար ծախսված նատրիումի լաուրիլսուլֆատի 0,005 ռ. լուծույթի ծավալն է, սմ³:

զ. Հետազոտվող միջոցի լուծույթի պատրաստում: Հետազոտվող միջոցի կշռուկը 9,5-10,5 գ զանգվածով, վերցված մինչև 0,0002 գ ճշտությամբ, քանակապես տեղափոխում են 25 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ և թորած ջրով հասցնում մինչև նիշը:

3) Հետազոտության իրականացում: 50 սմ³ տարողությամբ հղկված խցանով կոնաձև կոլբայի կամ գլանի մեջ ներմուծում են 5 սմ³ միջոցի ստացված լուծույթ (տես գ. կետ), 10 սմ³ քլորոֆորմ, ներմուծում են 30-50 մգ չոր ինդիկատորային խառնուրդ և լցնում 10 սմ³ բուֆերային լուծույթ: Կոլբան փակում են խցանով և թափահարում լուծույթը: Ստացված երկֆազ համակարգը տիտրում են նատրիումի լաուրիլսուլֆատի լուծույթով: Տիտրանտի հերթական մասնաբաժինն ավելացնելուց հետո լուծույթը կոլբայի մեջ թափահարում են: Տիտրման վերջում քլորոֆորմային շերտի վարդագույն գունավորումը փոխվում է կապույտի:

4) Արդյունքների մշակում: Դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդի զանգվածային բաժինը (X) տոկոսներով հաշվում են հետևյալ բանաձևով.

$$X_{\text{շառ}} = \frac{0,001805 \cdot V_{\text{շառ}} \cdot K \cdot V_1 \cdot 100}{m \cdot V_2}$$

որտեղ 0,001805 - դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդի զանգվածն է, որը համապատասխանում է նատրիումի լաուրիլսուլֆատի 1 սմ³ C(C₁₂H₂₅SO₄Na)=0,005 մոլ/դմ³ (0,005 Մ.) խտությամբ լուծույթին, գ,

V_{շառ} - տիտրման համար ծախսված նատրիումի լաուրիլսուլֆատի C(C₁₂H₂₅SO₄Na)=0,005 մոլ/դմ³ (0,005 Մ.) խտությամբ լուծույթի ծավալն է, սմ³,

K - նատրիումի լաուրիլսուլֆատի C(C₁₂H₂₅SO₄Na)= 0,005 մոլ/դմ³ (0,005 Մ.) խտությամբ լուծույթի շտկման գործակիցն է,

m - հետազոտվող նմուշի զանգվածն է, գ,

V₁ -ծավալն է, որի մեջ լուծված է միջոցի կշռուկը, հավասար 25 սմ³,

V₂ - հետազոտվող լուծույթի ալիկվոտայի ծավալն է, տիտրման համար վերցված (5 սմ³):

Որպես հետազոտության արդյունք ընդունում են երկու զուգահեռ որոշումների միջին թվաբանական մեծությունը, որոնց միջև բացարձակ տարբերությունը չպետք է գերազանցի թույլատրելի տարբերությունը, հավասար 0,5%-ի: հետազոտության արդյունքի թույլատրելի հարաբերական գումարային շեղումը ±5,0% է 0,95 վստահելիության հավանականության դեպքում:

89. N-(3-ամինոպրոպիլ)-N-դոդեցիլպրոպան-1,3-դիամինի զանգվածային բաժնի չափում:

1) Սարքավորումներ և ռեակտիվներ

ա. Կշեռք լաբորատոր ընդհանուր նշանակության, 2-րդ դասի ճշտության, ԳՕՍՍ 24104-2001, կշռման 200 գ առավելագույն սահմանով

բ. Բաժակ և B-1-150 կամ B-2-150, ԳՕՍՍ 25336- 82.

գ. Բյուրետ 1-2-25-0,1 ԳՕՍՍ 20292-74.

դ. Կոլբաներ K1 1-100-29/32 ԳՕՍՍ 25336-82.

ե. Աղաթթու, ջրային լուծույթ C(HCl) 0,1 մոլ/դմ³ (0,1N) էկվիվալենտի մոլյար խտության, պատրաստում են ստանդարտ-տիտրից ԳՕՍՍ 6-09-2540-72.

զ. Ինդիկատոր մեթիլային կարմիր ТУ 6-09-5169-84, 0.1% լուծույթ 95% էթիլ սպիրտի մեջ:

2) Հետազոտության իրականացում. 2 գ միջոց կշռում են 100 սմ³ տարողությամբ էրլենմեյերի կոլբայի մեջ մինչև 0,0002 գ ճշտությամբ, ավելացնում են 25 սմ³ թորած ջուր, 3-5 կաթիլ ինդիկատորի լուծույթ և տիտրում են C(HCl) 0,1 մոլ/դմ³ (0,1N) խտության աղաթթվով: Տիտրումն իրականացնում են 1 սմ³ մասնաբաժիններով, իսկ էկվիվալենտության կետին մոտ՝ 0,1-ական սմ³ մինչև բաց-կանաչ գունավորման անցումը վարդագույնի:

3) Արդյունքների մշակում. N-(3-ամինոպրոպիլ)-N-դոդեցիլպրոպան-1,3-դիամինի (X) զանգվածային բաժինը % -երով հաշվում են հետևյալ բանաձևով.

$$\text{Xտրիամին} = \frac{299,54 \cdot V \cdot K}{3 \cdot 100 \cdot m}$$

որտեղ 299,54/3 - N-(3-ամինոպրոպիլ)-N-դոդեցիլպրոպան-1,3-դիամինի գ-էկվիվալենտն է,

V - աղաթթվի լուծույթի ծավալն է C(HCl) 0,1 մոլ/դմ³ (0,1 N) խտության լուծույթի ծավալն է, որը ծախսվել է փորձարկվող նմուշի կշռուկի տիտրման վրա, սմ³,

m - միջոցի կշռուկի զանգվածն է, գ,

K = 0,92 - գործակիցն է, որը հաշվի է առնում տրիլոն Բ-ի ազդեցությունը:

90. Արդյունքը հաշվում են բանաձևով մինչև առաջին տասնորդական նիշի կլորացման աստիճանով: Որպես հետազոտության արդյունք ընդունում են երկու զուգահեռ մեծությունների միջին թվաբանականը, որոնց միջև տարբերությունը չի գերազանցում թույլատրելի տարբերությունը, հավասար 0,2 %-ի: Որոշման արդյունքի թույլատրելի հարաբերական գումարային շեղումը $\pm 4\%$ է $P = 0,95$ վստահելիության հավանականության դեպքում: